Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
մայիսի 21-ի N 773 - Ն որոշման

Նախաորակավորման հրավեր

Հայաստանում արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտայիկ ծրագրի համար

Մայիս, 2020թ.

Ծանուցում

Սույն Նախաորակավորման հրավերի մեջ պարունակվող ամբողջ տեղեկատվությունը՝ ներառյալ ֆինանսական, աշխարհագրական, առևտրային, իրավաբանական և տեխնիկական, ներառվել է Նախաորակավորման հրավերի մեջ բացառապես ներկայացուցչական և տեղեկատվական նպատակներով: Յուրաքանչյուր հայտատու միանձնյա և լիարժեք պատասխանատվություն կկրի նախաորակավորման հայտ ներկայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռք բերման և ծրագրի իրականացման համար՝ իր հայտի պայմաններին համապատասխան, եթե իր հայտը հաջողված է, իսկ հետագայում կներկայացնի հայտ ծրագրի իրականացման համար:

Չնայած սույն Նախաորակավորման հրավերի մեջ պարունակվող տեղեկատվությունը պատրաստվել է բարեխղճորեն, այն չի կարող համարվել ամբողջական կամ անկախ կերպով ստուգված: Ոչ՛ մրցույթի անցկացման լիազորված մարմինը, ոչ՛ նրա աշխատակիցները, գործակալները կամ խորհրդականները չեն կարող վկայել կամ երաշխավորել սույն Նախաորակավորման հրավերի մեջ պարունակվող առաջարկների հավաստիությունը, համարժեքությունը, ճշտությունը, հիմնավոր լինելը կամ ամբողջականությունը կամ այն տեղեկատվությունը, որի վրա այն հիմնված է, կամ գրավոր կամ բանավոր ցանկացած տեղեկություն, որը ներկայացվել կամ կատարվել է մրցույթի անցկացման լիազորված մարմնի կամ նրա խորհրդատուներից որևէ մեկի, ցանկացած հայտատուի կամ նրա մասնագիտացված խորհրդատուների կողմից, անկախ այն հանգամանքից, թե այն ներկայացվել կամ կատարվել է նախքան սույն ՈՀ-ի թողարկումը, թե դրանից հետո (համատեղ՝ «տեղեկատվություն»):

Մրցույթի անցկացման լիազորված մարմինը և նրա խորհրդատուները սույնով ուղղակիորեն հրաժարվում են որևիցէ և ամբողջական պատասխանատվությունից (բացի տեղեկությունների կեղծման դեպքերի), որոնք բխում կամ առնչվում են այդ տեղեկատվությանը (այդ թվում՝ դրա հետ կապված ցանկացած բացթողումների), ինչպես նաև հայտատուների և/կամ նրանց խորհրդատուների կողմից նման տեղեկատվությունը օգտագործելու և/կամ վստահություն ցուցաբերելու համար:

Հապավումներ

ՀՀԴ	ՀՀ դրամ
ԿՇԱ	Կոմերցիոն շահագործման ամսաթիվ
ՆՖԿՏՇ	Նախագծում, ֆինանսավորում, կառուցում, տնօրինում և շահագործում
ՀԷՑ	Հայաստանի էլեկտրական ցանցեր
ԵՍ	Եվրոպական ստանդարտներ
ՆԳՇ	Նախագծում, գնում և շինարարություն
ԷՀՕ	Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր
ԲՍԱԳ	Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում
Գլխավոր երկիր	Այն երկիրը, որտեղ Հավանական հայտատուն ունի իր գործունեության հիմնական վայրը (չափվում է հաշվի առնելով շրջանառության առավելագույն մասը), և այն դեպքում, երբ հավանական հայտատուն ունի մայր ընկերություն, այն երկիրը (եթե տարբեր է), որտեղ այդ մայր ընկերությունը ունի իր գործունեության հիմնական տեղը (չափվում է նույն հիմունքներով)
ՄԷՀ	Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողով
ՄՍԿ	Միջազգային ստանդարտների կազմակերպություն
ԱԷԱ	Անկախ էներգաարտադրող
ՄՎտ	մեգավատտ
ՄՎտպ	մեգավատտ պիկ
Շ&Պ	Շահագործում և պահպանում
Մայր ընկերություն	Մայր ընկերություն, որը հանդիսանում է հոլդինգային ընկերություն՝ հավանական հայտատուի համար
ՕՍԱ	Օրիգինալ սարքավորման արտադրող
ՀԾԿՀ	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ՖՎ	Ֆոտովոլտային
ՀՆՀ	Հայտերի ներկայացման հրավեր
ՆՈՀ	Նախաորակավորման հրավեր
S&P	Standard & Poor’s

ՄԱԿ	Միացյալ ազգերի կազմակերպություն
ԱՄՆ$	ԱՄՆ դոլար
ԷԳՊ	Էլեկտրաէներգիայի գնման պայմանագիր
ԾՀՀ	Ծրագրի հիմնադիրների համաձայնագիր
ՋԷԿ	Ջերմային Էլեկտրակայան

1. Նախաորակավորման հրավեր

1.1. Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2019 թ. դեկտեմբերի 26-ին ընդունված 1922 – Լ որոշումը, որով հավանության է արժանացել «Մասդար Արմենիա» ներդրումային ծրագիրը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը նախաձեռնել է միջազգային մրցույթի իրականացումը, որով հնարավորություն կընձեռնվի այլ կազմակերպությունների ներկայացնել մրցակցային սակագնի հայտ:

1.2. «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը» (Հիմնադրամ) ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հանձնարարականով մասնավոր մշակողներին (private developers) և կոնսորցիումներին հրավիրում է նախագծել, ֆինանսավորել, կառուցել, տնօրինել և շահագործել էներգետիկ ցանցին միացված 200 ՄՎտ արևային ՖՎ էլեկտրակայանի ծրագիրը («Ծրագիր – Այգ-1»): Ծրագրի տեղակայվող հզորությունը ներքին միացման տեղում կազմում է 200 ՄՎտ, իսկ իրականացման վայրը տեղակայված կլինի Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին, Դաշտադեմ և Աշնակ համայնքների միջև:

1.3. Ծրագիրը կմշակվի Նախագծման, ֆինանսավորման, կառուցման, տնօրինման և շահագործման հիման վրա, հատուկ նշանակության մեկ ընկերության կողմից (special purpose company) (Ծրագրի ընկերություն), որը որպես համատեղ սեփականություն պատկանելու է հաղթող ճանաչված հայտատուին (85% բաժնեմասնակցություն) և «Հայաստանի Պետական Հետաքրքրությունների Ֆոնդ» ՓԲԸ-ին (ԱՆԻՖ) (15% բաժնեմասնակցություն): Ծրագրի ընկերությունը պետք է հիմնադրված լինի և գտնվի Հայաստանի Հանրապետությունում՝ մասնավորապես Ծրագրի[1] նպատակներին ծառայելու համար:

1.4. Նպատակահարմարության նկատառումներից ելնելով, եթե այլ բան սահմանված չէ, սույն ՆՈՀ–ում կատարվող հղումները կմեկնաբանվեն հետևյալ կերպ.

(a) Ծրագրին կատարվող հղումը կմեկնաբանվի որպես Բաժին 1.2–ում նկարագրվող Ծրագրին կատարվող հղում,

[1] Տեղեկացում հավանական հայտատուին. ԱՆԻՖ-ը պետության ամբողջական բաժնեմասնակցությամբ ընկերություն է, որի 15% բաժնեմասնակցությունը Ծրագրի ընկերությունում պայմաններից մեկն է հաղթող ճանաչված հայտատուի համար: ԱՆԻՖ-ին Ծրագրի ընկերությունում 15% բաժնետոմսեր կտրամադրվի է որպես փոխհատուցում՝ տեղական գործընկերության համար: Մանրամասները կքննարկվեն սույն ՆՈՀ-ի հավելված 7-ում, ինչպես նաև Բաժնետերերի պայմանագրի նախագծում, որը կհրապարակվի ԱՆՀ- ի հետ միասին:

(b) Կառուցապատողին կատարվող հղումը կմեկնաբանվի որպես կառուցապատող այն ընկերությանը կամ կոնսորցիումին կատարվող հղումը, որը նկարագրվում է Բաժին 1.2–ում, որին շնորհվել է Ծրագրի իրականացման իրավունքը, և

(c) Վաճառողը պետք է մեկնաբանվի որպես Բաժին 1.3–ում նկարագրվող Ծրագրի ընկերությանը կատարվող հղում, որի միջոցով համապատասխան Կառուցապատողը կիրականացնի համապատասխան Ծրագիրը:

1.5. Ծրագիրը մշակելու համար հայտատուի ընտրությունը կիրականացվի երկու փուլով: Առաջին փուլը հանդիսանում է Նախաորակավորման հրավերը (ՆՈՀ)՝ նախանշված ժամկետում Ծրագիրն իրականացնելու համար պահանջվող փորձ և ֆինանսական ռեսուրսներ ունեցող հավանական հայտատուների նախաորակավորման համար: Երկրորդ փուլում հայտատուներից կպահանջվի ի պատասխան Հայտերի ներկայացման հրավերի ներկայացնել առաջարկներ: Այն դեպքում, երբ ներդրումային ծրագրի նախաձեռնող Աբու Դաբի ապագա էներգետիկայի ընկերություն ՀԲԸ-ը (Abu DhabiFuture Energy Company (Masdar)) չներկայացնի ամենացածր սակագնի առաջարկը, Մասդարին հնարավորություն կտրվի համապատասխանեցնելու իր գնառաջարկն այլ Նախաորակավորված հայտատուի կողմից ներկայացված ամենացածր սակագնին՝ առաջարկելով առնվազն 0,1 ԱՄՆ ցենտ/կՎտ/ժ ավելի ցածր սակագին: Բաժին 6–ում ներկայացվող ժամանակացույցով ներկայացվում է Ծրագրի համար մրցութային գործընթացի հիմնական բաղկացուցիչների ընդհանուր նկարագիրը:

1.6. Հայտատուները պետք է ի նկատի ունենան, որ սույն ՆՈՀ–ում Ծրագրի համար ներկայացվող նկարագրությունը, ներկայացնում է Հիմնադրամի ներկայիս մոտեցումը և ավելի ուշ կարող է ենթակվել աննշան փոփոխությունների: Ծրագրի ավելի մանրամասն նկարագրությունը և Ծրագրի ներքո կոմերցիոն համաձայնությունների հետ կապված մյուս մանրամասները կներառվեն Հայտերի ներկայացման հրավերում:

1.7. Հիմնադրամն այժմ հրավիրում է հավանական հայտատուներին (յուրաքանչյուրը՝ «Հավանական հայտատու»), ովքեր կարող են բավարարել Նախաորակավորման հրավերի սույն փաստաթղթում սահմանված չափորոշիչները, էլեկտրոնային եղանակով ներկայացնել նախաորակավորման հայտերը (յուրաքանչյուրը՝ «Նախաորակավորման հայտ»)՝ Նախաորակավորման սույն փաստաթղթի պահանջների համաձայն: Այնուամենայնիվ, մասնակցության իրավունք ունենալու համար Հավանական հայտատուներից կպահանջվի գրանցվել նախաորակավորման փուլի համար և սույն ՆՈՀ Հավելված 3–ում ներկայացվող Հիմնադրամի բանկային հաշվին

անկանխիկ եղանակով փոխանցելու միջոցով վճարել **1000 ԱՄՆ դոլար գումարը**: Վճարումը հիմնավորող ապացույցը պետք է ներառվի Նախաորակավորման հայտում:

1.8. Միայն նախաորակավորված համարվող հայտատուները («Նախաորակա–վորված հայտատուներ») իրավունք կունենան մասնակցելու ընտրության գործընթացի ՀՆՀ–ի փուլին, որը Հիմնադրամը կնախաձեռնի սահմանված կարգով:

1.9. Նախաորակավորման հայտերը պետք է էլեկտրոնային եղանակով ՆՈՀ պահանջներին համաձայն ներկայացվեն մինչ **2020թ–ի հուլիսի 1–ը՝ ժ. 17:00 (հայկական ժամանակով):** Նախաորակավորման հայտերը պետք է փաթեթավորված, պիտակավորված լինեն և ներկայացվեն ՆՈՀ պահանջներին համաձայն՝ մինչ **2020թ–ի հուլիսի 24–ը՝ ժ. 15:30 (հայկական ժամանակով):**

1.10. Այն դեպքում, երբ սույն ՆՈՀ-ի 1.9 կետի համաձայն ստացվեն երեքից պակաս Նախաորակավորման հայտերեր, ապա մրցույթի երկրորդ փուլը՝ ՀՆՀ-ն, չի կայանա:

2. Հրաժարում (Disclaimer)

2.1. Սույն ՆՈՀ–ում պարունակվող տեղեկատվությունը մշակվել է Հիմնադրամի կողմից և տրամադրվում է միմիայն Ծրագրի շրջանակներում իրենց սեփական գնահատումն իրականացնելու համար Հայտատուներին աջակցելու նպատակով: Այն չի հանդիսանում Ծրագրին առնչվող առաջարկ:

2.2. Սույն ՆՈՀ–ում ներկայացվող կամ մեկ այլ կերպ Հավանական հայտատուներին տրամադրվող տեղեկատվությունը չի ենթադրվում, որ ներառում է ամեն ինչ կամ որ ներառում է ողջ տեղեկատվությունը, որ Հայտատուն կամ վերջինիս խորհրդատուները կարող են պահանջել կամ կցանկանային ունենալ Ծրագրի վերաբերյալ: Հայտատուն պետք է ձևավորի իր սեփական տեսակետներն առ այն, թե որ տեղեկատվությունն է համարվում խնդրո առարկային առնչվող և իր սեփական ուսումնասիրությունները, կանխատեսումները և եզրահանգումներն անի և խորհրդակցի իր խորհրդատուների հետ՝ նման տեղեկատվությունը անկախ կերպով ստուգելու և լրացուցիչ այնպիսի տեղեկատվություն ձեռք բերելու համար, որը կարող է վերջինիս անհրաժեշտ լինել Նախաորակավորման հայտը ներկայացնելուց առաջ:

2.3. Ո՛չ Հիմնադրամը, ո՛չ ՀՀ կառավարությունը և ո՛չ էլ վերջինիս համապատասխան աշխատողները, պաշտոնատար անձինք, գործակալները որևէ պատասխանատվություն չեն կրում սույն ՆՈՀ–ի կամ Հավանական

Հայտատուներին սույն ՆՈՀ–ի համաձայն տրամադրված ցանկացած տեղեկատվության (այդ թվում՝ նաև արտահայտված ցանկացած կարծիքի) բովանդակային իմաստով ճշգրտության կամ ամբողջականության համար և նման տեղեկատվության կամ կարծիքների ճշգրտությունը կամ ամբողջականությունը բացահայտ կամ ենթադրյալ կերպով չեն ներկայացվի կամ երաշխիք չի տրամադրվի նման որևէ անձի կողմից:

2.4. Հիմնադրամը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության թույլտվությամբ, իրավասու է իր սեփական հայեցողությամբ, ցանկացած փուլում առանց նախապես ծանուցելու, փոփոխել մրցութային գործընթացի կառուցվածքը կամ ժամկետները, փոփոխել պարունակվող տեղեկատվությունը և մեկ այլ կերպ ՆՈՀ–ի համաձայն տրամադրել Հավանական հայտատուներին կամ դադարեցնել մրցութային գործընթացը: Հիմնադրամը համապատասխան տեղեկությունները հրապարակայնորեն մատչելի կդարձնի, ինչպես նաև մասնակիցներին/հեռանկարային հայտատուներին իր պաշտոնական կայքի միջոցով մեկ (1) աշխատանքային օրվա ընթացքում կտեղեկացնի համապատասխան փոփոխությունների մասին: Սույն կետի համաձայն նշանակալի փոփոխությունների դեպքում Հիմնադրամը համապատասխան ժամանակ կտրամադրի համապատասխանեցումների համար:

2.5. Ո՛չ Հիմնադրամը, ո՛չ ՀՀ կառավարությունը և ո՛չ էլ վերջիններիս համապատասխան աշխատակիցները, պաշտոնատար անձինք, գործակալները և խորհրդատուները որևէ պատասխանատվություն կամ պարտավորություն չեն կրում որևէ Հայտատուի կրած ծախսերի կամ այլ պարտավորությունների համար:

3. Տեխնիկական նկարագրություն

3.1. Տեխնիկական պատասխանատվության շրջանակ

3.1.1. Ծրագիրը ներառում է էներգետիկ ցանցին միացված 200 ՄՎտ արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի մշակում, ֆինանսավորում, պլանավորում, նախագծում, շինարարություն, տնօրինում, գործարկում և պահպանում: Ակնկալվում է, որ «Այգ-1» արևային ԱԷԱ/IPP-ն շահագործման կհանձնվի, և պայմանագրով սահմանված հզորությունը հասանելի կլինի 2023թ. թվականի 4-րդ եռամսյակին[2]:

[2] Կվերահաստատվի ՀՆՀ-ում:

3.1.2. Ծրագրի իրականացման վայրը տեղակայված կլինի Թալին քաղաքից 4 կմ հարավ-արևելք, ՀՀ Արագածոտնի մարզում ՝ մոտ 520 հա տարածքի վրա:

3.1.3. Հայտատուներին կառաջարկվի մշակել համապատասխան տեխնիկական հիմունքներով հագեցած ծրագիր, կիրառելով բարձր արդյունավետություն ունեցող հիմնավորված (proven) տեխնոլոգիաներ, ճկուն շահագործման և էկոլոգիապես ընդունելի կոնֆիգուրացիա, ինչպես նաև անվտանգ և հուսալի գործընթացներ և աշխատանքային ընթացակարգեր: Բացի այդ, կայանի հզորությունը և տեղանքի տեղադրությունը պետք է լինեն օպտիմալ համահունչ, որպեսզի համապատասխանեն տվյալ տարածքի սահմանափակումներին:

3.1.4. Հայտատուի կողմից առաջարկված ՆԳԾ կապալառուն պետք է ունենա բարձր որակավորում, ծրագրի նախագծման, գնման, շինարարության և շահագործման բավականաչափ փորձ, ինչպես նաև ծրագրի ժամանակին իրականացման հաստատող գրանցումներ, որտեղ կարևորվում են առողջապահական, անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության պահանջների պահպանումը:

3.1.5. Տեղանքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները, տեղանքի հասանելիությունը և հատակագիծը, փոխմիացման կետերը, և կայանի տեղադրման և կառուցապատման համար առկա տարածքները, կտրամադրվեն որպես ՀՆՀ-ի մաս այնքանով, որքանով այդ տվյալները հասանելի կլինեն3: Այնուամենայնիվ, հայտատուները պատասխանատու կլինեն Ծրագրի համար համապատասխան տեղեկատվություն ստանալու նպատակով իրենց անկախ հետազոտությունների անցկացման համար, որոնք պետք է համապատասխանեն ՀՆՀ-ին:

3.1.6. Ծրագիրը պետք է նախագծվի, կառուցվի և շահագործվի շրջակա միջավայրի պահպանության ազգային նորմերին և դրույթներին համապատասխան: Հաղթող ճանաչված հայտատուից կպահանջվի մշակել համապարփակ ԲՍԱԳ՝ որպես Ծրագրի բաղկացուցիչ մաս: Հաղթող ճանաչված հայտատուն պատասխանատու կլինի տվյալ ծրագրի համար անհրաժեշտ բոլոր շրջակա միջավայրի ոլորտում լիցենզիաների, թույլտվությունների, համաձայնեցումների ձեռք բերման համար:

3.1.7. ՀՆՀ-ի մեջ ներառված Տեխնիկական մասնագրերը կլինեն ֆունկցիոնալ և կազմված կլինեն հետևյալից՝
- նվազագույն աշխատանքային մասնագրեր;
- կիրառելի ստանդարտներ;

[3] Կվերահաստատվի ՀՆՀ-ում:

- կայանի ծավալ;
- գործարկման և փորձարկման պահանջներ;
- դիսպետչերական և գործառնական պահանջներ;
- տեխնիկական ինտերֆեյս;
- առողջապահական և անվտանգության պահանջներ;
- բնապահպանական ուղղվածություն;
- ճարտարապետական պահանջներ, և;
- թափոնների ուտիլիզացում և երկրորդային օգտագործում՝ շահագործման ժամկետի ավարտից հետո:

3.1.8. ՀՆՀ-ի համար հայտատուներից կպահանջվեն տեխնիկական և կատարողական տվյալներ, ինժիներատեխնիկական գծագրեր և այլն, որոնք կգնահատվեն ծրագրի տեխնիկական պահանջներին համապատասխանության ապահովման նպատակով:

3.1.9. Ինչ վերաբերում է ծրագրին, ապա հաղթող ճանաչված հայտատուն պատասխանատու կլինի շինարարության և շահագործման համար անհրաժեշտ բոլոր թույլտվությունների և համաձայնությունների ձեռք բերման համար: ԱՆԻՖ-ը լիակատար աջակցություն կցուցաբերի հաղթող ճանաչված հայտատուին անհրաժեշտ թույլտվությունների և համաձայնությունների ձեռք բերման գործում:

3.2. Ծրագրի նախագծման և ֆինանսավորման ընդհանուր նկարագրություն

3.2.1. Ծրագիրը կմշակվի «Նախագծում, ֆինանսավորում, կառուցում, տնօրինում և շահագործում» (DFBOO) սկզբունքով, հատուկ նշանակության մեկ Ընկերության կողմից (Ծրագրի ընկերություն), որը հանդիսանալու է հաղթող ճանաչված հայտատուի (85% բաժնեմասնակցություն) և «Հայաստանի Պետական Հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի (ԱՆԻՖ) (15% բաժնեմասնակցություն) համատեղ բաժնեմասնակցությամբ ընկերություն: Ծրագրի իրականացման ընկերության համար կառավարության որևէ մարմնի կողմից ներդրում չի իրականացվի: Ի լրումն Ծրագրի ընկերության գործընկերների ֆինանսավորմանը՝ Հիմնադրամն ակնկալում է, որ Ծրագիրը կֆինանսավորվի կամ սեփական միջոցների կամ առևտրային վարկի ֆինանսավորման միջոցով՝ առանց հետադարձ պահանջի իրավունքի:

3.2.2. Ակնկալվում է, որ Ծրագրի Կոմերցիոն Շահագործման ամսաթվին հնարավոր կլինի հասնել 2023թ-ի չորրորդ եռամսյակում: ՀԾԿՀ կողմից էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Ծրագրի ընկերությունը արտադրված

ողջ էներգիան 20 տարի ժամկետով էլեկտրաէներգիայի գնման համաձայնագրի (ԷԳՀ) շրջանակներում կմատակարարի էլեկտրաէներգիայի բաշխման մասնավոր ընկերությանը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին: Ծրագրի համաձայնագրերը կարող են նաև ներառել Կառավարության աջակցության համաձայնագիրը և այլ համաձայնագրերը, որոնց շրջանակը և դրույթները կսահմանվեն սահմանված կարգով: Ծրագրի համաձայնագրերի վերջնական տարբերակները կներկայացվեն նախարարակավորված հայտատուներին՝ ՀՆՀ–ի շրջանակներում:

3.3. Հողի իրավունքի համաձայնագիր

3.3.1. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ 520 հա հողատարածքը սեփականության իրավունքով անհատույց կտրամադրվի ԱՆԻՖ-ին՝ վերջինիս և համապատասխան պետական մարմնի / համայնքի միջև կնքված հողահատկացման պայմանագրերի հիման վրա: Նշված հողատարածքը ԱՆԻՖ-ին տրամադրելուց առաջ իրականացվեու է հողի նպատակային նշանակության փոփոխություն և տարածքի չափագրում WGS-84 (ArmREF02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում: ԱՆԻՖ-ը հողատարածքի օգտագործման իրավունքն անվճար հիմունքներով տրամադրելու է Ծրագրի ընկերությանը:

3.4. Ծրագրի Ընկերության ստեղծման մասին պայմանագիր

3.4.1. Հաղթող ճանաչված հայտատուն Ծրագրի ընկերության ստեղծման մասին պայմանագիր (ՍՊ) կկնքի ԱՆԻՖ-ի հետ՝ համաձայն սույն ՆՈՀ-ի Հավելված 7-ով սահմանված դրույթների:

4. Հավանական հայտատուի կազմը, մասնակցության սահմանափակումը և արժեքը

4.1. Հաշվի առնելով ծրագրի ներուժը՝ չափազանց կարևոր է, որ հավանական հայտատուն ցուցադրի հաջող միջազգային փորձը, որը ձեռք է բերել երկրից դուրս էլեկտրակայանների կառուցման ընթացքում:

4.2. Հավանական հայտատուն կարող է լինել ընկերություն, ֆիրմա, կորպորատիվ մարմին (corporate body) կամ իրավաբանական այլ անձ կամ կոնսորցիում («Կոնսորցիում»), որը կազմված կլինի երկու կամ ավելի անդամներից (յուրաքանչյուրը՝ «Կոնսորցիումի անդամ»), որոնք միշտ պետք է հետևեն սույն փաստաթղթի պահանջներին: Հավանական հայտատուն, կամ եթե հավանական հայտատուն կոնսորցիում է, ապա կոնսորցիումի յուրաքանչյուր անդամ պետք է լինի պատշաճ կերպով

հիմնադրված առևտրային կազմակերպություն, որը գոյություն ունի և գրանցված է իր գրանցման երկրի օրենսդրությանը համապատասխան:

4.3. Հավանական հայտատուները պետք է ի նկատի ունենան, որ Կոնսորցիումի համար չկա որպես Կոնսորցիումի անդամ Օրիգինալ սարքավորման արտադրողին (ՕՍԱ) ներգրավելու պահանջ: Փոխարենը, յուրաքանչյուր նախաորակավորված հայտատուի թույլ կտան (որպես Առաջարկի մի մաս) թվել մի շարք Օրիգինալ սարքավորման արտադրողների (ՕՍԱ), որպես խոշոր բաղկացուցիչ մասերի մատակարարների, որոնք ի վերջո կիրականացնեն Ծրագիրը այն դեպքում, եթե Նախաորակավորված հայտատուն հաղթող ճանաչվի:

4.4. Կազմակերպությունը, որը համարվում է Շ&Պ հավանական կապալառու կամ ԷԳՊ կապալառու, կարող է պայմանագրային գործունեություն ծավալել միայն մի քանի հավանական հայտատուների հետ, և այդ դեպքում այն չի դիտվի որպես հավանական հայտատուի մաս: Այնուամենայնիվ, եթե Շ&Պ կապալառուն և/կամ ԷԳՊ կապալառուն նույնպես անմիջականորեն մասնակցում են որպես հավանական հայտատու, ապա այն կարող է մասնակցել միայն Շ&Պ կամ ԷԳՊ-ի պայմանագրում մեկից ավելի հավանական հայտատուների հետ՝ Հիմնադրամից գրավոր հավանություն ստանալուց հետո՝ նախքան նախաորակավորման ձևի ներկայացնելը:

4.5. Նպատակն այն է, որ Հավանական հայտատուները կարողանան ապահովել մրցակցությունը մի շարք ՕՍԱ–ների շրջանում, միևնույն ժամանակ թույլ տալով ՕՍԱ–ներին՝ ճկունություն ցուցաբերել և իրենց արտադրանքն առաջարկել մի շարք Նախաորակավորված հայտատուների: Խորհուրդ է տրվում, որպեսզի հավանական ցանկացած հայտատու, ով նախատեսում է Կոնսորցիում ձևավորել, որը չի ներառում ՕՍԱ, ապահովի համապատասխանությունը Հավելված 2–ում ներկայացվող տեխնիկական պահանջներին:

4.6. Յուրաքանչյուր կոնսորցիում պետք է նշանակի և լիազորի կոնսորցիումի գլխավոր անդամ (Կոնսորցիումի գլխավոր անդամ), որը կհամապատասխանի հետևյալ պահանջներին, որոնք ի վերջո Ծրագրի համաձայնագրերի միջոցով կկիրառվեն Ծրագրի նկատմամբ.

A. Ծրագրային համաձայնագրերի ստորագրման օրը և ԿՇԱ-ին հաջորդիվ երկու տարիների համար՝

i. Կոնսորցիումի գլխավոր անդամը պետք է (դրանց միջև) ունենա Ծրագրի ընկերությունում կառավարող բաժնեմասնակցություն, իսկ այս

նկատառումներից ելնելով՝ կառավարող բաժնեմասնակցությունը կազմված կլինի հետևյալից՝

a. Ծրագրի ընկերության կանոնադրական կապիտալի 50%–ից ավելիի՝ ուղղակի կամ անուղղակի տիրապետում,

b. Տնօրենների խորհրդի (և համանման այլ խորհրդի) մեծամասնությանն ընտրելու իրավասություն կամ Վաճառողի կառավարումը և քաղաքականություններն ուղղակի կամ անուղղակի կերպով մեկ այլ կերպ ուղղորդելու իրավասություն, և

c. Պայմանագրային կամ այնպիսի այլ հարաբերությունների բացակայություն, որոնց նպատակն է երրորդ կողմին փոխանցել, հանձնարարել կամ պատվիրակել վերոնշյալ (a) և (b) կետերում նկարագրվող բենեֆիցիարի իրավունքը:

B. Կոնսորցիումի գլխավոր անդամը լիազորված կլինի ներկայացնել և անչեղարկելիորեն միավորել կոնսորցիումի բոլոր անդամներին նախաորակավորման և հայտատուների ընտրության և Ծրագրի շնորհման գործընթացի («Գործընթաց») հետ կապված բոլոր դեպքերում՝ ներառյալ, սակայն չսահմանափակվելով Կոնսորցիումի անունից Նախաորակավորման հայտի ներկայացմամբ:

4.7. Որևէ իրավաբանական անձ կամ այլ անձ չեն կարող մասնակցել կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ներգրավվել (այդ թվում նաև փոխկապակցված կողմի միջոցով) մեկից ավելի Նախաորակավորման հայտի շրջանակներում, պայմանով, որ այս պահանջն ինքնին չի արգելում ցանկացած ՕՍԱ-ի կամ կապալառուի՝ մի քանի Նախաորակավորված հայտատուների սարքավորումներ կամ ծառայություններ առաջարկելուց:

4.8. Հավանական հայտատուների կազմը (այդ թվում նաև ցանկացած Կոնսորցիումի կառուցվածքը) պետք է ֆիքսվի, որը կգործի Նախաորակավորման հայտերը ներկայացնելու վերջնաժամկետից: Առանց Հիմնադրամի գրավոր համաձայնության չի թույլատրվի փոփոխել կազմը (կամ նման կառուցվածքը), այդ թվում նաև գործընկերային հարաբերությունները, քանի դեռ չի ստորագրվել և հետո հատուկ չի նախատեսվում Ծրագրային համաձայնագրում:

4.9. Յուրաքանչյուր Հավանական հայտատու պետք է հոգա Նախաորակավորման հայտերի պատրաստման և ներկայացման հետ

կապված բոլոր ծախսերը՝ ներառյալ, սակայն չսահմանափակվելով Հավանական հայտատուի կողմից այն հարցերի պատասխանների կամ բացատրությունների տրամադրման Հիմնադրամի խնդրագրերին ի պատասխան Հավանական հայտատուի պատասխանների պատրաստման հետ կապված ծախսերով:

5. Նախաորակավորման հայտ

5.1. Ներածություն

5.1.1. Նախաորակավորման յուրաքանչյուր հայտ և վերջինիս առնչվող ողջ հաղորդակցությունը և փաստաթղթերը պետք է ներկայացվեն Հավելված 3-ում սահմանված լեզվով: Նման լեզվով չներկայացվող ցանկացած նյութ բոլոր դեպքերում հաշվի չի առնվի:

5.1.2. Նախաորակավորման յուրաքանչյուր հայտ կազմված կլինի հետևյալ փաստաթղթերից.

a. Մաս I – ապացույց առ այն, որ համապատասխան Հավանական հայտատուն բավարարում է Տեխնիկական չափորոշիչներից առնվազն մեկին (տե՛ս Բաժին 5.2-ը):

b. Մաս II – ապացույց առ այն, որ համապատասպան Հավանական հայտատուն բավարարում է համապատասխան ֆինանսական չափորոշչին (տե՛ս Բաժին 5.3-ը):

c. Մաս III – ապացույցներ առ այն, որ Հավանական հայտատուն բավարարում է բոլոր իրավական չափորոշիչներին (տե՛ս Բաժին 5.4-ը) և

d. Մաս IV – նախաորակավորման ձևը և այլ փաստաթղթերը կամ տեղեկատվությունը (տե՛ս Բաժին 5.5-ը):

5.1.3. Նախաորակավորման ոչ մի հայտ չպետք է ներառի գներ և գնասանդղակ կամ ցանկացած այլ հղում Ծրագրին առնչվող դրույքաչափերին և գներին: Նախարոակավորման ցանկացած հայտ, որը պարունակում է գնի մասին նման տեղեկատվություն, կչեղարկվի և համապատասխան Հավանական հայտատուները կորակազրկվեն:

5.1.4. Բաժին 5.1.3-ի համաձայն, Հավանական հայտատուն ազատ է լրացուցիչ նյութեր ներառել (այդ թվում նաև ընկերության բրոշյուրները և այլ նախապես տպված գրականություն) իր Նախաորակավորման հայտում,

այն դեպքում, եթե դրանք առանձին են կարվում վերոնշյալ Բաժին I-ից և IV-ից: Այնուամենայնիվ, Հիմնադրամը որևէ պարտավորություն չի կրում նման նյութերը քննության առնելու և Հավանական հայտատուի նախաորակավորման հայտի գնահատման շրջանակներում դիտարկելու համար: Հավանական յուրաքանչյուր հայտատու պետք է ապահովի, որպեսզի իր որակավորման հետ կապված ողջ տեղեկատվությունը ներկայացվի Մաս I – IV-ում:

5.2. Տեխնիկական որակավորում

5.2.1. Հավանական հայտատուներից կպահանջվի ներկայացնել առնվազն նախագծման, կառուցման և շահագործման հետևյալ փորձ (Տեխնիկական չափորոշիչ) և հավաստում ներկայացնել Բաժին 5.2.3-ի համաձայն:

5.2.2. Վերոնշյալ տեխնիկական չափորոշչին համապատասխանող ճանաչվելու համար անհրաժեշտ կլինի, որպեսզի էլեկտրակայանը բավարարի ստորև բերված պահանջները.

A. Հավանական հայտատուն կամ Կոնսորցիումի դեպքում՝ Կոնսորցիումի գլխավոր անդամը պետք է ներկայացնի համապատասխան փորձ.

i. ցանցին միացված մեկ կամ մի քանի արևային ֆոտովոլտային էլեկտրակայաններ, որոնք աշխատում են աշխարհի ցանկացած կետում ՝ նվազագույնը 200 ՄՎտ գումարային հզորությամբ, կամ
ii. ցանցին միացված մեկ կամ վերականգնվող տեխնոլոգիաների վրա աշխատող մի քանի էլեկտրակայաններ, որոնք հիմնված են աշխարհի ցանկացած կետում նվազագույնը 400 ՄՎտ կուտակային հզորությամբ;

B. Բոլոր դեպքերում, համապատասխան փորձը պետք է ներկայացվի կորպորատիվ մակարդակում, այլ ոչ թե Կոնսորցիումի գլխավոր անդամի կողմից ներգրավված մեկ կամ մեկից ավելի անհատների մակարդակում:

C. Հավանական հայտատուին կամ Կոնսորցիումի գլխավոր անդամին պետք է ուղղակի կամ անուղղակի կերպով պատկանի համապատասխան էլեկտրակայանի/-ների բաժնեմասերի 25%-ը կամ ավելի մեծ տոկոսը ֆինանսական փակման, շինարարության կամ կոմերցիոն շահագործման առնվազն երկու տարվա համար:

D. Հիմնադրամի կողմից գրավոր պահանջ ներկայացնելուց հետո 10 օրվա ընթացքում պետք է ներկայացնել ապացույց առ այն, որ նշված էլեկտրակայաններից յուրաքանչյուրի տարեկան միջին բեռնվածությունը կազմում է 95%: Տարեկան միջին բեռնվածությունը կհաշվարկվի՝ հիմնվելով այն ժամանակաշրջանի վրա, երբ տվյալ էլեկտրակայանը կարողացել է էլեկտրաէներգիա արտադրել կարգաբերման դեպքում, սակայն կբացառի պարապուրդի/դադարի բոլոր շրջանները, անկախ այն բանից, թե պլանավորվա՞ծ է, թե՞ ո՛չ: Էլեկտրակայանների տարեկան միջին բեռնվածությունը պետք է չափել կոմերցիոն շահագործման օրվանից սկսած վեց ամիս հետո սկսելով:

5.2.3. Յուրաքանչյուր էլեկտրակայանի համար որպես Տեխնիկական չափորոշչին համապատասխանության հավաստիք Հավանական հայտատուն պետք է տրամադրի.

A. Հստակ հայտարարություն այն մասին, թե փորձը որ Տեխնիկական չափորոշչին է վերաբերում՝ հետևյալ տեղեկատվությամբ. (i) անուն, (ii) վայր, (iii) նկարագրություն, այդ թվում նաև արտադրելու կարողությունը, (iv) կոմերցիոն վաճառքի օրը, (v) Հավանական հայտատուի/ կոնսորցիումի գլխավոր անդամի(-ների) դերը, (vi) միջին հասանելիությունը, ինչպես սահմանվում է 5.2.2 D կետում և (vii) համապատասխան կայանում բաժնեմասերի ուղղակի կամ անուղղակի սեփականությունը, և

B. Ճշգրտելի ապացույց[4], որով հաստատվում է վերոնշյալ (A) կետի շրջանակներում պահանջվող տեղեկատվությունը:

5.3. Ֆինանսական որակավորում

5.3.1. Հավանական հայտատուից կպահանջվի բավարարել նախաորակավորման հետևյալ երկու ֆինանսական չափորոշիչներից մեկը (յուրաքանչյուրը՝ Ֆինանսական չափորոշիչ) և ներկայացնել Բաժին 5.3.3–ում նկարագրվող փաստաթղթերը:

A. Եթե Հավանական հայտատուն կազմված է մեկ ընկերությունից, ապա նման ընկերության.

(i) զուտ ակտիվների պետք է կազմի առնվազն 100 մլն ԱՄՆ դոլար կամ համարժեք գումար, և

[4] Ապացույցները պետք է լինեն անգլերեն և Հիմնադրամին ընձեռեն ողջամիտ հնարավորություն ստուգելու նման ապացույցների առկայությունը:

(ii) զուտ ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը պետք է լինի առնվազն 20%:

B. Եթե Հավանական հայտատուն Կոնսորցիում է հանդիսանում, ապա

Կոնսորցիումի գլխավոր անդամի զուտ ակտիվները պետք է կազմի առնվազն 100 մլն ԱՄՆ դոլար կամ համարժեք գումար, կամ զուտ ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը պետք է կազմի առվազն 20%,

Վերոնշյալ դեպքերից յուրաքանչյուրի համար վերջին երկու ամբողջական ֆինանսական տարիների վերջի դրությամբ, որի համար առկա են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները, հարկ է ցույց տալ համապատասխանությունը պահանջներին, նախքան սույն ՆՈՀ–ին պատասխանելու վերջնաժամկետը:

C. Ցանկացած Հավանական հայտատու, ով ի վիճակի չէ բավարարել համապատասխան ֆինանսական չափորոշիչները՝ Կոնսորցիումի գլխավոր անդամի հետ կապված հանգամանքներից ելնելով, ապա պետք է այնուամենայնիվ համարվի Ֆինանսական չափորոշիչները բավարարած հետևյալ դեպքերում.

(i) Եթե կոնսորցիումի գլխավոր անդամը չի բավարարում ակտիվների զուտ արժեքի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ապահովման պահանջը, ապա կոնսորցիումի գլխավոր անդամը պետք է այնուամենայնիվ, համարվի նման քննությունը բավարարած.

a. Եթե վերջինիս ակտիվների զուտ արժեքը կազմում է առնվազն 500մլն ԱՄՆ դոլար և ակտիվների զուտ արժեքի և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը կազմում է առնվազն 10%, կամ

b. Վերջինիս Նախաորակավորման հայտը ներառում է մի նամակ վերջինիս գլխավոր ֆինանսիստից կամ համարժեք պաշտոնատար անձից՝ նման Ծրագրի համար կոնսորցիումի ղեկավարի ֆինանսական պարտավորություններին աջակցելու նպատակով, ում (i) ուղղակի կամ անուղղակի կերպվով պատկանում է Հիմնական հովանավորի բաժնեմասերի առնվազն 75%–ը, (ii) որն ունի S&P/Moody's/Fitch–ի կողմից տրված ներդրումային կարգի վարկային վարկանիշ արտարժույթով, և (iii) որը վերջին ամբողջական ֆինանսական

տարիների ընթացքում ինքն ապահովել է համապատասխանությունը ֆինանսական չափորոշիչներին, որի համար առկա են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները Նախաորակավորման հայտի ներկայացման վերջնաժամկետի դրությամբ:

(ii) Այն դեպքերում, երբ համապատասխան Կոնսորցիումի գլխավոր անդամի ֆինանսական հանգամանքները պայմանավորված են նրանով, որ կոնսորցիումի գլխավոր անդամի սեփականատերը հանդիսանում է ներդրումային ֆոնդ և արդյունքում, չի կարողանում բավարարել մեկ կամ մեկից ավելի Ֆինանսական չափորոշիչներին (ակտիվների զուտ արժեքի և ակտիվների զուտ արժեքի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության), այն այնուամենայնիվ, պետք է համարվի որպես համապատասխան չափորոշիչները բավարարած, եթե Նախաորակավորման համապատասխան հայտը ներառում է.

a. Մեկ կամ մեկից ավելի, սահմանափակ թվով գործընկերներից կամ այլ ներդրողներից ստացված, Հիմնադրամի համար բավարար կերպով անչեղարկելի պարտավորությունների՝ պատշաճ կերպով հավաստված պատճենները առավազն 300 մլն ԱՄՆ դոլարի չափով Նախաորակավորման հայտի ներկայացման վերջնաժամկետին նախորդող երկու շաբաթների ընթացքում:

b. Նամակ գլխավոր ֆինանսիստից, Ներդրումների գծով գլխավոր մասնագետից կամ նման հիմնադրամի/միջոցների համարժեք ղեկավարից՝

(1) հավաստելով, առնվազն 75 մլն ԱՄՆ դոլարի (կամ համարժեք գումարի) առկայություն նշված ամսաթվի դրությամբ,

(2) պարտավորվելով Հիմնադրամին տեղեկացնել այդ միջոցներն այլ նպատակով տեղաբաշխվելու դեպքում:

(3) Ընդունելով, որ Հավանական հայտատուին կներկայացվեն հետևյալ լրացուցիչ պահանջները՝

- որպես նախաորակավորման հայտատու, ներկայացնել լրացուցիչ պահանջ ՀՆՀ-ի շրջանակներում որպես ցանկացած վերջնական առաջարկի մաս Standard & Poor 's, Moody' s Investors

Service կամ Fitch Ratings Limited վարկանշային ծառայություններում Արտարժութային միջազգային երկարաժամկետ վարկային ունեցող անձի կողմից առնվազն A-, A3 կամ A - ի չափով երաշխիքի կամ ակրեդիտիվի տրամադրում համապատասխանաբար 75 մլն ԱՄՆ դոլարից ոչ պակաս գումարի չափով,

- եթե ի վերջո, շնորհվել է Ծրագիրը, ապա Ծրագրի համաձայնագրերով նախատեսված է լրացուցիչ պայման, որ այդպիսի միջոցների կառավարիչը պետք է պահպանի համապատասխան կոնսորցիումի գլխավոր անդամի բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը մինչև Կոմերցիոն շահագործման ամսաթվի երկրորդ տարին, ինչպես սահմանված է ԷԳՀ-ում:

(4) Հավաստելով, որ նախօրոք յուրաքանչյուր մեգավատտի համար մի կողմ կդրվի առնվազն 1.2 մլն ԱՄՆ դոլար կազմող գումար, և

(5) Պարտավորվելով Հիմնադրամին տեղեկացնել այդ միջոցներն այլ նպատակով տեղաբաշխվելու դեպքում:

5.3.2. Սույն Բաժին 5–ի համար

a. **Ակտիվների զուտ արժեքը** կհաշվարկվի հետևյալ կերպ. Բաժանորդագրված և վճարված կապիտալ՝ *գումարած* պահուստները՝ *հանած* վերագնահատման պահուստները՝ *հանած* դուրս չգրված այլ ծախսերը:

b. **Ընդհանուր ակտիվները** պետք է ստացվեն համապատասխան ֆինանսական տարիների համար աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից:

5.3.3. Հավանական հայտատուն պետք է իր կամ եթե Հավանական Հայտատուն Կոնսորցիում է, կոնսորցիումի գլխավոր անդամի համար տրամադրի՝

a. Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները, որոնք պետք է հավուր պատշաճի հավաստված լինեն հավաստագրված հաշվապահի կողմից, վերջին երեք ամբողջական ֆինանսական տարիների համար, որոնց համար առկա են նման հաշվետվությունները՝ յուրաքանչյուր դեպքում ներառելով համախմբված հաշվեկշիռը, Ֆինանսական արդյունքի, դրամական

միջոցների հոսքի մասին հաշվետվություններըև հաշվետվություններին կից ծանոթագրությունները, և

b. զուտ ակտիվների և ընդհանուր ակտիվների քայլ առ քայլ հաշվարկը (այդ թվում նաև, երբ կետ (a) –ի համաձայն ներկայացվող, աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները հստակ կերպով չեն վերաբերում հաշվապահական հաշվառման հասկացություններին, որոնք տրվում են զուտ ակտիվների և ընդհանուր ակտիվների սահմանումներում, համապատասխան լրացուցիչ փաստաթղթերը, բացատրագիրը և/կամ նման աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին խաչաձև հղումներ, որը կարող է տեղին համարել):

5.4. Իրավական որակավորում

5.4.1. ՆՈՀ–ի նպատակներից ելնելով՝ Համապատասխան անձ նշանակում է.

a. ցանկացած ընկերություն, որը ֆինանսավորում է, ներդնում, զարգացնում, շահագործում կամ աջակցում է անկախ էներգետիկ ծրագրերը, որը ղեկավարում, ղեկավարվում է նման անձի կողմից ընդհանուր վերահսկման շրջանակներում,
b. Կետ (ա)–ում հղվող նման անձի կամ ցանկացած ընկերության ցանկացած տնօրեն, թոփ մենեջեր կամ մենեջեր,
c. Ցանկացած խորհրդատու, գործակալ կամ ներկայացուցիչ, ով աջակցում է նման անձին Ծրագրի հետ կապված գործընթացի կապակցությամբ, և
d. Բաժնեմասային կապիտալի առնվազն 5%–ի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող կամ նման անձի սեփականության իրավունք ունեցող ցանկացած անձ (ինչ կերպով որ եղել է):

5.4.2. Չբացառելով Բաժին 5.2 և 5.3–ը, որպես Նախաորակավորված հայտատու հայտարարելու նպատակով Հավանական հայտատուն, կամ երբ Հավանական հայտատուն հանդիսանում է Կոնսորցիում, Կոնսորցիումի յուրաքանչյուր անդամից կպահանջվի բավարարել իրավական նախաորակավորման հետևյալ չափորոշիչները (յուրաքանչյուրը Իրավական չափորոշիչ) և ներկայացնել Բաժին 5.4.3–ում նկարագրվող փաստաթղթերը:

a. Վերջինս և բոլոր Համապատասխան անձինք սնանկ կամ կամավոր կամ հարկադրաբար լուծարման գործընթացում չեն գտնվում կամ վերջիններիս գործերը դատարանում կամ դատական մարմնի աշխատակցի կողմից չեն կարգավորվում, վերջիններիս բիզնես

գործընթացները չեն կասեցվել, վերջիններիս բիզնես գործունեությունները չեն կասեցվել կամ դատական գործ չի հարուցվել և խելամիտ կերպով ակնկալում են կատարել ֆինանսական բոլոր պարտավորությունները այդպիսիք առաջանալու դեպքում:

b. Ո՛չ այն և ո՛չ էլ ցանկացած Համապատասխան անձ չի մեղադրվել խարդախության, կոռուպցիայի, գաղտնի համաձայնության կամ փողերի լվացման կամ քրեորեն պատժելի արարքի համար, որը ներառում է անազնվությունը, ֆիզիկական բռնությունը կամ մարդու կյանքին հասցված վնասը կամ ցանկացած քրեորեն պատժելի արարք, որը վերաբերում է մասնագիտական գործունեությանը՝ գնումների գործընթացը սկսելուց անց հինգ տարի ժամկետում, և ոչ էլ հանդիսանում է վստահության կամ մշտական մեղադրանքների առարկա, քննության է առնվում ուսումնասիրվող քրեորեն պատժելի գործողությունների մասով:

c. Այն տեղյակ չէ շահերի որևէ բախման և շահերի պոտենցիալ բախման մասին, որոնք առաջանում են առկա պայմանագրերի կամ հարաբերությունների առնչությամբ, որոնք կարող են ազդել Գնորդի (կիրառելի լինելու դեպքում) Ծրագրում հավանական ներգրավման վրա (այլ, քան մատակարարման կամ ծառայությունների մատուցման համաձայնագրերը Կոնսորցիումի անդամների կորպորատիվ խմբի անդամների շրջանում սովորական գործունեության ընթացքում):

d. Ո՛չ այն, ո՛չ էլ Համապատասխան անձը չունեն որևէ հարկային պարտավորություն, չմարված սոցիալական ապահովության վճարներ կամ պարտավորություններ՝ ցանկացած դատարանի որոշման կամ դատական գործի համաձայն՝ սույն հրավերին նախորդող երեք տարիների ընթացքում, այնքանով, որքանով վերջինս հարմար հաշվապահական ձևակերպում է նախատեսել՝ հաշվապահական հաշվառման կիրառելի կանոնակարգերի համաձայն նման պարտավորությունները ձևակերպելու նպատակով:

e. Ո՛չ այն, ո՛չ էլ որևէ Համապատասխան անձ նախկինում չի հեռացվել մրցույթից կամ Հայաստանի Հանրապետությունում պետական գնումների գործընթացից:

f. Ո՛չ այն , ո՛չ էլ որևէ համապատասխան անձ չի ունեցել կոնցեսիա/ զիջումներ կամ ԷԳՀ-ի դադարեցում, որը կարելի է վերագրել կոնցեսիոների իր պարտավորությունների չկատարման հետ կոնցեսիայի դեպքում կամ էլեկրաէներգիայի վաճառքի հետ ԷԳՀ-ի դեպքում;

g. Ո՛չ այն և ո՛չ էլ Համապատասխան անձը

(i) ներառված չէ բազմակողմ զարգացման ցանկացած բանկի պատժամիջոցների կիրառման համար ցուցակում, որը կողմ է հանդիսանում 2010թ–ի ապրիլի 9–ով թվագրված Գործունեության դադարեցման մասին որոշման համատեղ իրականացման համաձայնագրի (www.crossdebarment.org):

(ii) վերջինս ներառված է ՄԱԿ–ի անվտանգության խորհրդի կամ վերջինիս որևէ կոմիտեի՝ պատժամիջոցների կիրառման ցանկացած ցանկում կամ պատժամիջոցների կիրառման ճանաչված միջազգային այլ ցանկում, և

h. Ո՛չ այն և ո՛չ էլ ցանկացած Համապատասխան անձ գործառնություններ և տրանզակցիաներ չի իրականացնում (ուղղակիորեն կամ ցանկացած դուստր ձեռնարկության միջոցով) կամ այնպիսի տրանզակցիաներ չի իրականացնում, որոնք չեն համապատասխանում ՄԱԿ–ի անվտանգության խորհրդի կամ վերջինիս կոմիտեների կողմից հաստատված պատժամիջոցներին կամ Հայաստանի Հանրապետության կողմից հայտարարված ազգային պատժամիջոցներին:

i. Ո՛չ այն և ո՛չ էլ ցանկացած Համապատասխան անձ զրկվել կամ կասեցվել է մասնակցելու հանրային գնումների մրցույթների իրենց երկրներում:

5.4.3. Հավանական հայտատուն կամ եթե հավանական հայտատուն հանդիսանում է Կոնսորցիում, Կոնսորցիումի յուրաքանչյուր անդամ պետք է ի լրումն այլոց, տրամադրի հետևյալը.

a. Հավելված 4–ում ներկայացվող ձևով հավաստող նամակ,

b. կազմակերպչական համապարփակ կառուցվածքը, որտեղ կներկայացվի շարադրանք, որը կնկարագրի վերջինիս սեփականատիրության ձևը, մինչև սեփականության վերջին օղակը՝ սեփականությունը անհատների կողմից, գրելով բոլոր իրավաբանական և ֆիզիկական անձանց անունները (կազմակերպչական կառուցվածքի ցանկացած մակարդակում), որոնց համախառն բենեֆիցիարի վերջնական իրավունքը կկազմի առնվազն 5%:

c. արդի համարվող հիմնադիր փաստաթղթերի հավաստագրված պատճենները (օրինակ՝ գրանցման վկայական, իրավաբանական անձանց պետական գրանցում, կանոնադրություն և այլն), և

d. լիազորագիր՝ հիմնականում Հավելված 5–ում ներկայացվող ձևով, որով անձը (–ինք) կլիազորվեն ստորագրել և ներկայացնել Նախաորակավորման հայտը Հավանական հայտատուի անունից:

e. պաշտոնական հաստատող նամակ, որ հավանական հայտատուն կամ որևէ Կոնսորցիումի անդամներ (եթե հավանական հայտատուն հանդիսանում է Կոնսորցիում) չեն զրկվել կամ կասեցվել մասնակցելու պետական գնումների մրցույթներից համապատասխանաբար իրենց երկրներում:

5.5. Նախաորակավորման ձև և հայտի ներկայացման վճար

5.5.1. Յուրաքանչյուր Հավանական հայտատու պետք է նախաորակավորման ձևը ներկայացնի կից բերվող Հավելված 6–ում (Նախաորակավորման ձև) ներկայացվող ձևով:

5.5.2. Յուրաքանչյուր Հավանական հայտատու պետք է տրամադրի հավաստում առ այն, որ Հիմնադրամին վճարվել է մասնակցության վճարը (ՆՈՀ մասնակցության վճար), որը սահմանվում է Հավելված 3-ում, այդ հավելվածում ներկայացվող բանկային հաշվին՝ հետևյալ տվյալներով. (ա) Հավանական հայտատուի անունը, (բ) ՆՈՀ մասնակցության վճարի վճարման օրը և (գ) անունը, էլ. փոստի հասցեն և կոնտակտային անձի հեռախոսի համարները ՆՈՀ–ի մասնակցության վճարի վճարման մասին հարցում կատարելու համար:

6. Գործընթաց և ժամանակացույց

6.1. Պարզաբանումներ

Հավանական ցանկացած հայտատու կարող է պահանջել ցանկացած պարզաբանում Նախաորակավորման սույն հրավերի ցանկացած մասի առնչությամբ, կամ այստեղ ներկայացվող ցանկացած պահանջի առնչությամբ, կարող են գրավոր կերպով ծանուցել Հիմնադրամին Հավելված 3–ում մատնանշվող էլեկտրոնային փոստի հասցեով՝ Գնահատված ժամանակացույցում նման հայտերը ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետից առաջ (ինչպես սահմանվում է ստորև) : Այնքանով, որքանով Հիմնադրամը պատասխանում է նման ցանկացած հայտի (և վերջինս այդպես վարվելու պարտավորություն չունի), վերջինս նման պատասխանը/–ները կուղարկի

Հավանական բոլոր հայտատուներին մեկ կամ մեկից ավելի խմբերով և սկզբնական պարզաբանման հայտի/–երի աղբյուրն առանց բացահայտելու:

6.2. Գնահատված ժամանակացույց

6.2.1. Ստորև ներկայացվում է գնահատված ժամանակացույցը

Գործողություն	Վերջնաժամկետ
ՆՈՀ թողարկում	Զրոյական ժամկետ (T0) (մայիսի 22, 2020թ.)
Պարզաբանման ներկայացման խնդրագրի վերջնաժամկետ	T_7 -ից T_{14}
Տվյալների բազայի ստեղծում, /Հ/Պ վերջնաժամկետ	T_{41} -ից T_{53} (հուլիսի 2, 2020թ – հուլիսի 14, 2020թ.)
Նախաորակավորման հայտի էլեկտրոնային ներկայացման վերջնաժամկետ	T_{40} (հուլիսի 1, 2020թ. հայկական ժամանակով ժամը 17.00)
Նախաորակավորման հայտի բնօրինակների ներկայացման վերջնաժամկետ	T_{63} (հուլիսի 24, 2020թ. հայկական ժամանակով ժամը 15.30)
Նախաորակավորված հայտատուների հայտարարում	T_{70} (հուլիսի 31, 2020թ.)
ՀՆՀ թողարկում	T_{73} (օգոստոսի 3, 2020թ.)
ՀՆՀ–ի համար հանդիպում մասնակիցների հետ	T_{77}-ից T_{89} (մինչև օգոստոսի 19)
Տեղական փորձագետների հետ այցելություն տեղանք	T_{90} (օգոստոսի 20, 2020թ.)
Հայտերի ներկայացում	T_{123} (սեպտեմբերի 22, 2020թ.)
Հաղթող ճանաչված հայտատուի հայտարարում	Զրոյական ամսաթիվ՝ Z_0 (հոկտեմբերի 15, 2020թ.)
Կառավարության աջակցության համաձայնագրի (ԿԱՀ-ի) ստորագրում	Z_0 + 30 օր

ԷԳՊ-ի ստորագրում	Z_0 + 95 օր

6.2.2. Գնահատված ժամանակացույցը ներկայացվում է միմիայն կողմնորոշելու նպատակով, իսկ Հիմնադրամը որևէ պատասխանատվություն չի կրի վերջինիս համար: Հիմնադրամը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համաձայնությամբ, կարող է իր հայեցողությամբ ցանկացած ժամանակ վերանայել Գնահատված ժամանակացույցը (և Բաժին 6.2.1–ի ցանկացած այլ տեղեկատվություն) պայմանով, որ որևէ դեպքում նման փոփոխությունը չի հանգեցնի Նախաորակավորման համար հայտի ներկայացման վերջնաժամկետի կրճատման: Նման փոփոխություն կատարելուց հետո գործնականում հնարավորության դեպքում Հիմնադրամը Հավանական հայտատուներին կծանուցի նման փոփոխությունների մասին (հենց որ սույն ՆՈՀ–ում ժամանակի և վերջնաժամկետների համար կատարվող բոլոր հղումները համարվեն համապատասխանաբար փոփոխված):

6.3. Նախաորակավորման հայտերի ներկայացման ձևաչափ, ստորագրում և ներկայացում

6.3.1. Նախաորակավորման հայտը, PDF ձևաչափով (բաժանված առանձին ֆայլերի՝ I – IV բաժիններից յուրաքանչյուրի համար, ինչպես նկարագրվում է Բաժին 5.1.2–ում) անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով zaruhi.gharagyozyan@r2e2.am, r2e2fund@gmail.com հասցեով մինչև 2020 թ. հուլիսի 1-ը, ժամը 17:00-ը հետևյալ բովանդակությամբ՝ **200 ՄՎտ Այգ-1 Արևային ՖՎ Ծրագիր-Նախաորակավորման հրավեր: Նախաորակավորման հայտի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելուց հետո** յուրաքանչյուր հավանական հայտատու պետք է պատրաստի և ներկայացնի Նախաորակավորման հայտի մեկ բնօրինակը և համապատասխան քանակով պատճենները՝ Հավելված 3–ում սահմանվածի համաձայն՝ USB կրիչի հետ միասին (ամեն դեպքում գաղտնաբառով պաշտպանված, որով կխուսափեն փաստաթղթի փոփոխումից), որը կպարունակի Նախաորակավորման հայտի բնօրինակի սկանավորված, PDF ձևաչափով ամբողջական պատճենը (բաժանված առանձին ֆայլերի՝ I – IV բաժիններից յուրաքանչյուրի համար):

6.3.2. Անձը (–ինք), ովքեր պատշաճ կերպով լիազորված են Բաժին 5.4.3(d)–ում նշված լիազորագրով (–երով), Հավանական հայտատուները կստորագրեն Նախաորակավորման հայտը.

a. Ստորագրելով համապատասխան Նախաորակավորման հայտի բնօրինակը, և

b. Նախաորակավորման հայտի բնօրինակի բոլոր էջերը նախաստորագրելով:

6.3.3. Նախաորակավորման հայտը պետք է տպվի, չպետք է պարունակի որևէ փոփոխություն, բացթողում կամ հավելում: Ցանկացած ձեռագիր տեքստ, այլ քան ստորագրությունը և անվան և ազգանվան սկզբնատառերով նախաստորագումը, որոնք հղվում են Բաժին 6.3.2–ում, կանտեսվեն:

6.3.4. Նախաորակավորման հայտի բնօրինակը պետք է ուղարկվի նաև Հիմնադրամի հասցեին՝ Սայաթ-Նովա 29/1, Երևան, Հայաստան, մինչև 2020 թ. հուլիսի 24-ը: Հավանական հայտատուն պետք է Նախաորակավորման հայտի բնօրինակը և յուրաքանչյուր պատճենն առանձին ծրարում փակի, որոնցից յուրաքանչյուրը պետք է համապատասխանի Բաժին 5–ի պահանջներին և ծրարների վրա պետք է նշի՝ **«Նախաորակավորման հայտ – բնօրինակ», «Նախաորակավորման հայտ»**: Նման յուրաքանչյուր ծրարի վրա պետք է նշված լինի Հավանական հայտատուի անունը (կամ կանսորցիումի դեպքում, Կոնսորցիումի անդամների անունները և Գլխավոր անդամի հասցեն, որով հնարավոր կլինի Նախաորակավորման համապատասխան հայտը առանց բացելու հետ վերադարձնել այն դեպքում, եթե նման հայտը ժամկետից ուշ ներկայացվի): Ծրարները պետք է փակված լինեն աավելի մեծ ծրարների մեջ, որի վրա պետք է լինի (առանց լրացուցիչ այլ տեքստի նշման) **200 ՄՎտ Այգ-1 Արևային ՖՎ Ծրագիր- Նախաորակավորման հրավեր:** Նախաորակավորման հայտի բնօրինակը կարող է ներկայացվել Նախաորակավորման հայտի ներկայացման վերջնաժամկետից հետո:

6.3.5. Ուշ ներկայացված հայտերը չեն ընդունվի:

6.3.6. Արտաքին ծրարը չպետք է բացահայտի Հավանական հայտատուի կամ Կոնսորցիումի որևէ անդամի ինքնությունը և հասցեն:

6.4 Նախաորակավորված հայտերի գնահատում

6.4.1 Հիմնադրամը պետք է նախ քննության առնի Նախաորակավորման հայտերից յուրաքանչյուրը՝ որոշելու համար, թե արդյոք այն ամբողջական է իր ձևի և բովանդակության առումով:

6.4.2 Երբ Հիմնադրամը համարում է հարմար կամ բացատրությունների համար անհրաժեշտ, վերջինս կարող է, սակայն նման պարտավորություն չունի, լրացուցիչ տեղեկատվություն կամ փաստաթղթեր խնդրել Հավանական հայտատուից (լինի դա նման Հավանական հայտատուին, կոնսորցիումի ցանկացած անդամին, համապատասխան Նախաորակավորման հայտին կամ ցանկացած այլ փաստաթղթին վերաբերող) որոշելու համար նախաորակավորման համար վերջինիս հավակնությունը: Երբ նման խնդրանք է ներկայացվում, Հավանական հայտատուն յոթ օրվա ընթացքում Հիմնադրամին կտրամադրի պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթերը (կամ ավելի երկար ժամկետում, որը սահմանվում է Հիմնադրամի կողմից):

6.4.3 Այն բանից հետո, երբ Հիմնադրամն ավարտի բացատրական գործընթացը (այդպիսին լինելու դեպքում), այն կանցնի Նախաորակավորման հայտերի պաշտոնական գնահատման: Նման գնահատումը պետք է իրականացվի «անցավ/չանցավ» հիմունքներով՝ հետևյալ կերպ.

a. Ցանկացած Հավանական հայտատու, ում Նախաորակավորման հայտը համապատասխանում է Բաժին 5–ի պահանջներին, կորակվի որպես Նախաորակավորված հայտատու: Հիմնադրամը Նախաորակավորված բոլոր հայտատուներին զուգահեռաբար կծանուցի, թե արդյոք վերջիններիս Նախաորակավորման հայտերն ընդունվել են և կշարունակեն, երբ պատրաստ լինեն բացել տեղեկատվական սենյակը նման բոլոր Նախաորակավորված հայտատուների համար:

b. Ցանկացած Հավանական հայտատու, ում Նախաորակավորման հայտը չի համապատասխանում Բաժին 5–ի պահանջներին, կորակվի որպես չորակավորված հայտատու: Հիմնադրամը նման չորակավորված հայտատուներին միաժամանակ կծանուցի այն մասին, որ իրենց Նախաորակավորման հայտերը մերժվել են:

6.4.4 Բաժին 6.4.3–ում ներկայացվող պաշտոնական գնահատման համար Հիմնադրամն իրավասու է (սակայն պարտավոր չէ) հաշվի չառնել շեղումները Բաժին 5–ում ներկայացվող, պաշտոնապես սահմանված պահանջներից, այն դեպքում, եթե համապատասխան Հավանական հայտատուի Նախաորակավորման հայտից (Բաժին 6.1–ի համաձայն համապատասխան բացատրություններից) պարզ է, որ Հավանական հայտատուն բավարարում է Տեխնիկական չափորոշիչներից առնվազն մեկը, համապատասխան Ֆինանսական չափորոշիչը և բոլոր իրավական չափորոշիչները:

6.4.5 Հիմնադրամը իրավունք ունի որակազրկել ցանկացած Հավանական հայտատուի Գործընթացին մասնակցությունից՝ Բաժին 6.4.3–ում ներկայացվող պաշտոնական գնահատման ընթացքում կամ դրանից հետո, եթե պարզի, որ նման Հավանական հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթում Նախաորակավորման հայտի հետ կապված որևէ հայտարարություն սխալ է/էր կամ էապես խեղաթյուրում է/էր:

6.5 Գործընթացի դադարեցում կամ փոփոխում

6.5.1 Չնայած սույն ՆՈՀ-ի, ցանկացած այլ դրույթի կամ Գործընթացի առնչությամբ արդեն իսկ թողարկված կամ ապագայում թողարկման ենթակա ցանկացած այլ փաստաթղթի, Հիմնադրամը ցանկացած ժամանակ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության թույլտվությամբ, իրավասու է՝

a. մերժել այն երկրների հավանական հայտատուների Նախաորակավորման հայտերը, որոնց հետ Հայաստանի Հանրապետությունը չունի դիվանագիտական հարաբերություններ,

b. Փոփոխել Գործընթացի շրջանակներում գտնվող Ծրագրի մասշտաբները,

c. Փոփոխել Գործընթացը կամ փոփոխել կամ պարզաբանել վերջինիս առնչվող ընթացակարգերը և կանոնները:

d. Ժամանակ առ ժամանակ երկարացնել կամ փոփոխել Գնահատված ժամանակացույցը,

e. Դադարեցնել Գործընթացը, և

f. Լրացուցիչ տեղեկատվություն խնդրել Հավանական հայտատուից, որն օբյեկտիվորեն պահանջվում են Նախաորակավորման սույն հայտը գնահատելու նպատակով:

Յուրաքանչյուր դեպքում, ցանկացած ժամանակ և ցանկացած նպատակով և առանց լրացուցիչ պարտավորություն առաջացնելու Հավանական ցանկացած հայտատուի կամ Նախաորակավորված հայտատուի համար:

6.6 Ղեկավարող իրավունք

Գործընթացը կղեկավարվի Հայաստանի Հանրապետության իրավունքով:

Հավելված 1: Ընդհանուր տեղեկատվություն

1. Էներգետիկ ոլորտը Հայաստանում

1.1. Էներգետիկ համակարգը բաժանված է և բաղկացած է էներգիայի արտադրության, հաղորդման և բաշխման անկախ ընկերություններից, ինչպես նաև էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորից և հաշվարկային կենտրոնից: Էներգետիկ համակարգը կանոնակարգում է կարգավորող անկախ մարմին հանդիսացող «Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի» (ՀԾԿՀ) կողմից: Ընդհանուր առմամբ կանոնակարգային շրջանակը համապատասխան է, իսկ սակագների սահմանման մեթոդաբանությունը թույլ է տալիս ծախսածածկություն ապահովել: Ստորև ներկայացվում է էներգետիկ համակարգի հիմնական ընկերությունների ամփոփ նկարագիրը, ինչպես նաև վերջիններիս փոխհարաբերությունները:

Գծապատկեր 1: Էներգետիկ համակարգի կառուցվածք



Աղբյուր՝ Հավելված. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018թ. հուլիսի 18-ի No 289L որոշում

Մեծածախ շուկայի մասնակիցներն են՝

1) էլեկտրական էներգիա արտադրողները, որոնք առաջիկա առնվազն յոթ տարիների ընթացքում կդասակարգվեն հետևյալ խմբերում.

ա. էլեկտրական էներգիա արտադրողներ, որոնք ենթակա են սակագնային կարգավորման և միևնույն ժամանակ կարող են գործել նաև մրցակցային գներով (այսուհետև՝ ԿԷԱ), մասնավորապես՝ հայկական ատոմային էլեկտրակայանը (այսուհետ՝ ՀԱԷԿ), Երևանի համակցված շոգեգազային ցիկլով 1-ին էներգաբլոկը (այսուհետ՝ Երևանի ՀՇԳՑԷ-1), «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության Հրազդանի ջերմային էլեկտրակայանը (այսուհետ՝ ՀրազՋԷԿ), Սևան-Հրազդանյան հիդրոէլեկտրակայանների համալիրը.

բ. էլեկտրական էներգիա արտադրողներ, որոնք գործում են ՊՄԳ պայմանագրերի շրջանակում և ենթակա են բացառապես սակագնային կարգավորման (այսուհետև՝ ՊԷԱ), մասնավորապես՝ Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրը, Երևանի համակցված շոգեգազային ցիկլով 2-րդ էներգաբլոկը (այսուհետ՝ Երևանի ՀՇԳՑԷ-2), «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանը, «Շնող» հիդրոէլեկտրակայանը.

գ. փոքր հիդրոէլեկտրակայաններ (մինչև 30 ՄՎտ հզորությամբ) և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ էլեկտրական էներգիա արտադրողներ (այսուհետև՝ ՎԷԱ), որոնք ունեն «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված էլեկտրական էներգիայի գնման երաշխիք (ներկայիս տվյալներով սպասվում է, որ 2020թ. կլինեն նման 191 կայաններ՝ 360 ՄՎտ ընդհանուր հզորությամբ և 1035 ԳՎտժ միջին տարեկան արտադրությամբ).

դ. շուկայում լիարժեք մրցակցային գներով էլեկտրական էներգիա արտադրողներ (այսուհետև՝ ՄԷԱ), որոնք են «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերության շոգեգազային ցիկլով էլեկտրական էներգիա արտադրող «Հրազդան-5» կայանը (այսուհետ՝ «Հրազդան-5» կայան), որի սակագինը թեև այս պահին կարգավորվում է, սակայն նման կարգավորումը հենվում է ՀրազՋԷԿ-ի սակագինը որպես սահմանային մեծություն ընդունելու սկզբունքի վրա, և արդյունքում «Հրազդան-5» կայանը դե ֆակտո գործում է շուկայական գնագոյացման մեխանիզմով՝ դե յուրե լինելով սակագնային կարգավորման ներքո: «Հրազդան-5» կայանը սակագնային կարգավորման դաշտից լիարժեք հանելը էապես կնպաստի շուկայի զարգացմանը: Այս խմբում են նաև ՎԷԱ կայանները, որոնց «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված էլեկտրական էներգիայի գնման երաշխիքի ժամկետը սպառվել է (ներկայիս տվյալներով սպասվում է, որ 2020թ. կլինեն նման 27

կայաններ՝ 56 ՄՎտ ընդհանուր հզորությամբ և 156 ԳՎտԺ միջին տարեկան արտադրությամբ) և չկարգավորվող (ազատ) գներով այլ արտադրողները (այս պահին, ըստ էության, երկու փոքր կոգեներացիոն կայաններն են, որոնք նաև ջերմային էներգիա են արտադրում):

Ըստ էության ՄԷԱ կայանները կլինեն առաջինները, որոնք շուկայում կգործեն լիարժեք մրցակցության պայմաններում: Շուկայի նոր կառուցվածքը և առևտրի մեխանիզմը նպատակ ունեն ապահովել շուկա լիարժեք մրցակցային պայմաններով նոր ՄԷԱ կայանների մուտքը՝ մասնավոր ներդրումներ ներգրավելու նպատակով: Սակայն, սա չի նշանակում, որ միայն ՄԷԱ կայանները կկարողանան մրցակցային պայմաններով էլեկտրական էներգիա վաճառել: ԿԷԱ կայանները ևս, մեծածախ շուկայի կարգավորվող հատվածում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց հետո ազատություն կունենան չկարգավորվող (ազատ) գներով էլեկտրական էներգիա վաճառելու հարցում: Չի բացառվում նաև, որ ՀԱԷԿ-ը և Երևանի ՀՇԳՑԷ-1 կայանը որոշակի իրավիճակներում ունենան շուկայի կարգավորվող հատվածում չպահանջված էլեկտրական էներգիայի ավելցուկ և կարողանան այդ էլեկտրական էներգիան վաճառել չկարգավորվող (ազատ) գներով: Այս ամենը կախված կլինի պահանջարկի աճից, կառուցվածքից և կայանի աշխատանքի ռեժիմային փոփոխությունից, ինչպես նաև շուկայի կանոններով ԿԷԱ կայաններին տրված ազատություններից.

2) Երաշխավորված մատակարարը, որի դերն առաջին յոթ տարիների համար կստանձնի Բաշխողը՝ ՀԷՑ-ը, և որը կշարունակի ամբողջովին մնալ կարգավորման դաշտում նաև որպես Երաշխավորված մատակարար: Երաշխավորված մատակարարին կթույլատրվի էլեկտրական էներգիա գնել մեծածախ շուկայում, ներկրել այն, ինչպես նաև ավելցուկը վաճառել շուկայի այլ մասնակիցներին՝ շուկայի կանոններով սահմանված ընթացակարգերով: Երաշխավորված մատակարարը կշարունակի ապահովել մեծածախ շուկայում իր կողմից գնված էլեկտրական էներգիայի (հզորության) համար վճարումները՝ Հանձնաժողովի 2017թ. օգոստոսի 9-ի No344Ն որոշմամբ հաստատված էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ժամանակավոր առևտրային կանոններով սահմանված հատուկ հաշվի մեխանիզմով.

3) Մատակարարները, որոնք Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայում ներկայումս չեն գործում և ակնկալվում է, որ մուտք կգործեն աստիճանաբար՝ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2018թ. փետրվարի 7-ի ՀՕ-100-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց ու շուկայի ազատական կառուցվածքին անցնելուց հետո: Մատակարարներին կթույլատրվի էլեկտրական էներգիա գնել մեծածախ շուկայից և ինքնավար էներգաարտադրողներից, ներկրել այն, ինչպես նաև ավելցուկը վաճառել շուկայի այլ մասնակիցների՝ շուկայի

կանոններով սահմանված ընթացակարգերով: Վերջիններս պարտավոր կլինեն Հանձնաժողովի կողմից սահմանված պայմանագրերի օրինակելի ձևերին համապատասխան ապահովել իրենց հետ մատակարարման պայմանագրեր կնքած սպառողների էլեկտրամատակարարումը.

4) Թրեյդերները, որին բնորոշ գործառույթներով ներկայումս գործում է միայն մեկ պետական ընկերություն («ԷՆԵՐԳԱԻՄՊԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն)՝ ունենալով էլեկտրական էներգիայի ներկրման լիցենզիա: Ակնկալվում է, որ շուկայի զարգացմանը զուգահեռ ի հայտ կգան նաև նոր մասնավոր Թրեյդերներ: Թրեյդերերին իրավունք կտրվի չկարգավորվող (ազատ) գներով էլեկտրական էներգիա գնել արտադրողներից և մեծածախ շուկայի այլ մասնակիցներից, այն արտահանել, ինչպես նաև ներկրել ու վաճառել մեծածախ շուկայում՝ շուկայի կանոններով սահմանված ընթացակարգերով: Այս համատեքստում հարկ է նշել, որ էլեկտրական էներգիան արտահանելու իրավունք կտրվի միայն էլեկտրական էներգիայի սպառման ներքին պահանջարկի բավարարման դեպքում, ինչի որոշման չափորոշիչները պետք է նկարագրվեն շուկայի կանոններում.

5) Որակավորված սպառողները, որոնց, «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2018թ. փետրվարի 7-ի ՀՕ-100-Ն օրենքի համաձայն՝ կթույլատրվի էլեկտրական էներգիա գնել մեծածախ շուկայում, ներկրել այն կամ ավելցուկը վաճառել շուկայի մյուս մասնակիցներին՝ շուկայի կանոններով սահմանված ընթացակարգերով: Ցանկացած սպառող կկարողանա ստանալ Որակավորված սպառողի կարգավիճակ՝ սեփական դիմումի հիման վրա, շուկայի կանոններով սահմանված չափանիշներին համապատասխանելու դեպքում: Ներկայումս, էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ժամանակավոր առևտրային կանոնների համաձայն՝ միայն 6(10) կՎ և բարձր լարմամբ բաշխման ցանցին միացած սպառողները կարող են ստանալ Որակավորված սպառողի կարգավիճակ, եթե վերջինիս առևտրային հաշվառման համակարգը բավարարում է Հանձնաժողովի 2017թ. մայիսի 17-ի No161Ն որոշմամբ հաստատված էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոններով սահմանված չափանիշներին և գրանցված է Շուկայի օպերատորի կողմից: Թեև այս շրջանակն արդեն իսկ բավական ընդարձակ է, այն աստիճանաբար էլ ավելի կարող է ընդարձակվել՝ ներառելով բոլոր արևտրային սպառողներին, լարման բոլոր մակարդակներում.

6) ինքնավար էներգաարտադրող սպառողները (այսուհետ՝ ԻԷԱ սպառողներ), որոնք սեփական կարիքների բավարարման համար էլեկտրական էներգիա արտադրող իրավաբանական կամ ֆիզիկական անձինք են և, ըստ էության, սպառողներ են: Միևնույն ժամանակ, ԻԷԱ սպառողի տեղակայանքների դրվածքային հզորությունը չպետք է գերազանցի էլեկտրական էներգիայի իր

սպառիչների տեղակայված ընդհանուր հզորությունը, բայց ոչ ավելի, քան 150 կՎտ-ը, ինչպես նաև 150 կՎտ դրվածքային հզորությամբ ԻԷԱ սպառողների կողմից էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը չի կարգավորվում արտադրության ժամանակահատվածում, իսկ արևային կայանների դեպքում՝ նաև կառուցման ժամանակահատվածում: Ընդ որում, մինչև 2022թ. հունվարի 1-ը նշված 150 կՎտ-ի փոխարեն թույլատրվում է մինչև 500 կՎտ հզորությամբ արևային կայանների կառուցումը ԻԷԱ սպառողների կողմից: «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ԻԷԱ սպառողների կողմից ՀԷՑ-ին և հակառակ ուղղությամբ մատակարարած էլեկտրական էներգիայի դիմաց վճարման ենթակա գումարների հաշվարկը կատարվում է ամսական, իսկ վերջնահաշվարկը՝ տարեկան կտրվածքով: Ըստ էության, ԻԷԱ սպառողները հնարավորություն ունեն իրենց կողմից արտադրած էլեկտրական էներգիայի ավելցուկը «պահեստավորելու» ՀԷՑ-ում և սպառելու այն ժամանակահատվածում, երբ սեփական պահանջարկն ավելի բարձր է տվյալ կայանի արտադրությունից: Սպառված և բաշխման ցանց լրացուցիչ առաքած էլեկտրական էներգիայի վերջնական հաշվեկշռումն իրականացվում է տարեկան արդյունքներով: Երբ սպառումը գերազանցում է արտադրությունը, ապա ԻԷԱ սպառողը վճարում է դրա համար Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների համաձայն, իսկ հակառակ դեպքում ՀԷՑ-ն է վճարում տվյալ ԻԷԱ սպառողին՝ տվյալ տիպի կայանի համար օրենքով սահմանված փոխհատուցման չափով: Այս մեխանիզմները հիմնականում կատարելագործվել և ամբողջականացվել են վերջին երկու տարիների ընթացքում: Վերը շարադրված ամբողջ գործիքակազմը բավական լուրջ խթաններ է պարունակում ԻԷԱ սպառողների զարգացման համար և Հայաստանի Հանրապետությունում դեռևս 2018թ. ապրիլի 1-ի դրությամբ արդեն իսկ գործում են 306 ԻԷԱ սպառողներ, գումարային 3,4 ՄՎտ հզորությամբ: «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2018թ. փետրվարի 7-ի ՀՕ-100-Ն օրենքի համաձայն՝ ԻԷԱ սպառողները կպահպանեն իրենց իրավունքը էլեկտրական էներգիան նույն պայմաններով «պուհուստավորելու» արդեն իսկ Երաշխավորված մատակարարի մոտ, ինչպես նաև վաճառելու Մատակարարներին կամ Թրեյդերներին՝ անուղակիորեն մասնակցելով ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ շուկաներում:

Մեծածախ շուկայի ծառայություններ մատուցողներն են՝

1) Համակարգի օպերատորը, որին կտրվի բացառիկ իրավունք և կպարտավորեցվի շուկայի մասնակիցներին մատուցելու էլեկտրաէներգետիկական համակարգում կարճաժամկետ պլանավորման ու կարգավարման, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատիվ

կառավարման, էլեկտրական էներգիայի հաղորդման ցանցի զարգացման պլանավորման և տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական համակարգերի հետ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի զուգահեռ աշխատանքի ապահովման ծառայությունները: Բացի այդ, Համակարգի օպերատորը կունենա լիցենզիայի պայմաններով և շուկայի կանոններով նախատեսված այլ ոչ բացառիկ գործառույթների իրականացման իրավունքներ: Համակարգի օպերատորը արտադրողներին կարգավարելիս պարտավոր կլինի ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները էլեկտրական էներգիայի արտադրությունը և հաղորդումը նվազագույն ծախսերով ապահովելու համար՝ հաշվի առնելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով տրված էլեկտրական էներգիայի գնման երաշխիքները կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ՊՄԳ պայմանագրերով ստանձնած պարտավորությունները.

2) Շուկայի օպերատորը, որին կտրվի բացառիկ իրավունք և կպարտավորեցվի շուկայի մասնակիցներին մատուցել հետևյալ ծառայությունները.

ա. էլեկտրաէներգետիկական շուկայի գործունեության կազմակերպում,

բ. էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների հաշվառում,

գ. մեծածախ շուկայի մասնակիցների միջև պայմանագրերի և էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման և ներկրման պայմանագրերի հաշվառման վարում,

դ. էլեկտրաէներգետիկական շուկայում կնքված պայմանագրերի, ինչպես նաև արտահանման և ներկրման պայմանագրերի համաձայն գնված և վաճառված էլեկտրական էներգիայի (հզորության) հաշվառում, փաստաթղթերի կազմում և մեծածախ շուկայի առևտրի մասնակիցներին և ծառայություններ մատուցողներին դրանց ներկայացում,

ե. լիցենզիայի պայմաններով և շուկայի կանոններով նախատեսված այլ ոչ բացառիկ գործառույթների իրականացման իրավունք:

Շուկայի օպերատորը այլ լիցենզավորված անձանց հետ համատեղ պետք է մշակի էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկայի առևտրային կանոնները՝ դրանք Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելու նպատակով: էլեկտրական էներգիայի, հզորության և համակարգային օժանդակ ծառայությունների ցանկացած մրցունակ գնման կազմակերպում պետք է կատարվի Շուկայի օպերատորի միջոցով.

3) Հաղորդողը, որը ներկայումս «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունն է (այսուհետ՝ ԲԷՑ) և գործում է Համակարգի օպերատորի լիակատար վերահսկողության ներքո: Համաձայն «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ Հաղորդողին տրվում է Հայաստանի Հանրապետության տարածքում էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման ծառայություն

մատուցելու, հաղորդման ցանց կառուցելու (վերակառուցելու) իրավունք: Հաղորդողը պարտավոր է կատարել իր գործառույթները շուկայի կանոնների և կնքված պայմանագրերի համաձայն: Հաղորդողի, Համակարգի օպերատորի, Շուկայի օպերատորի և մեծածախ շուկայի մասնակիցների հարաբերությունները կկարգավորվեն շուկայի կանոններով և պայմանագրերով:

4) Բաշխողը՝ ներկայումս ՀԷՑ-ը, որը ծառայություններ է մատուցում մեծածախ շուկայի այն մասնակիցներին, որոնք միացված են բաշխման ցանցին: Բաշխողը կշարունակի իր ծառայությունների մատուցումը շուկայի կանոնների և կնքված պայմանագրերի համաձայն:

Մանրածախ շուկայի մասնակիցներն են՝

1) Երաշխավորված մատակարարը, որը ամբողջովին կլինի Հանձնաժողովի կարգավորման դաշտում և էլեկտրական էներգիա կմատակարարի բոլոր սպառողներին, որոնք չեն օգտվում Մատակարարների ծառայություններից, կամ որոնց Մատակարարն էլեկտրական էներգիա չի մատակարարում՝ տվյալ սպառողից անկախ պատճառներով: Այդ սպառողների կազմում կլինեն նաև խոցելի սպառողները, որոնք այլ մատակարար ընտրելու հնարավորություն չեն ունենա: Երաշխավորված մատակարարը և վերջինիս սպառողները մատակարարման պայմանագրեր կկնքեն Հանձաժողովի կողմից սահմանված պայմանագրի օրինակելի ձևին համապատասխան.

2) Մատակարարները, որոնք մուտք կգործեն մանրածախ շուկա աստիճանաբար՝ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2018թ. փետրվարի 7-ի ՀՕ-100-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց և շուկայի ազատական կառուցվածքին անցնելուց հետո՝ հնարավոր դարձնելով մանրածախ մրցակցությունը:

   Մանրածախ շուկայի ծառայություն մատուցողն է Բաշխողը՝ ՀԷՑ-ը, որը կշարունակի իր գործունեությունը որպես միակ բաշխման ծառայություն մատուցող անձ՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում իր ծառայությունները մատուցելով մանրածախ շուկայի մասնակիցներին և ամբողջությամբ մնալով Հանձնաժողովի կարգավորման դաշտում՝ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզավորված գործունեություն իրականացնելու լիցենզիայի պայմանների, ինչպես նաև շուկայի կանոնների ու կնքված պայմանագրերի շրջանակներում:

1.2. ՀԾԿՀ–ն պատասխանատու է էներգետիկ ողջ ոլորտի կարգավորման, այդ թվում նաև էլեկտրաէներգիայի արտադրության, հաղորդման և բաշխման ընկերությունների և վերջնական օգտագործողների համար սակագները սահմանելու համար: Բացառությամբ վերականգնվող էներգիայի փոքր

կայանների (որոնց տեղակայված հզորությունը չիգերազանցում 30 ՄՎտ), որոնք ունեն feed-in (արտոնյալ) սակագներ և ՊՄԳ գործարքների շրջանակում ձևավորված սակագների, մյուս բոլոր արտադրող ընկերությունների համար սակագները սահմանվում են «վերադարձելիության» մեթոդաբանության հիման վրա: Այս ռեժիմով, այն եկամուտը, որը թույլ է տրվում որպեսզի ստանան արտադրող, հաղորդող և բաշխող ընկերությունները, ներառում է (ա) լիցենզավորված միջոցառումների հետ կապված թույլատրելի ծախսերը, ինչպես օրինակ՝ վառելիքի, շահագործման և պահպանման և վերականգնման ծախսերը, (բ) ակտիվների արժեզրկումը, (գ) հարկերը և այլ վճարները և (դ) ներդրված կապիտալի դիմաց թույլատրելի վերադարձելիությունը: Ներդրված կապիտալի դիմաց վերադարձելիությունը հիմնվում է գնահատված WACC–ի վրա: Սակագները հաշվարկվում են տեղական արժույթով:

1.3. Էներգետիկ ոլորտում բացահայտ կամ ոչ բացահայտ սուբսիդիավորում չկա, սպառված էլեկտրականության դիմաց վճարման բարձր կարգապահություն է Սպառված էլեկտրաէներգիայի դիմաց վճարների հավաքագրումը 2003թ–ից ի վեր կազմում էր վաճառքի 100%–ը:

1.4. Էլեկտրաէներգիայի մատակարարման արժեշղթայի յուրաքանչյուր սեգմենտի արժեքը ամբողջությամբ ներառված է վերջնական օգտագործողի սակագներում, եթե ստորև բերված հիմնական մեխանիզմներն առկա են:

2. Էներգետիկ ոլորտի պահանջարկի և առաջարկի հաշվեկշիռ

2.1. Ներկայումս երկում առկա է էներգիայի արտադրության բավարար կարողություն (այդ թվում հզորության ռեզերվ) առավելագույն բեռնվածության պահանջարկ բավարարելու համար: Հեռանկարում անհրաժեշտ կլինի արտադրական նոր հզորություններ ձևավորել՝ կանխատեսվող առավելագույն բեռնվածությունը բավարարելու համար: Նոր հզորությունների ձևավորումը պայմանավորված է տեղական պահանջարկի, արտահանման կանխատեսմամբ և Հրազդանի ՋԷԿ–ի՝ ոչ արդյունավետ աշխատող 1-4 էներգաբլոկների ապամոնտաժման անհրաժեշտությամբ: Ստորև ներկայացվում է առավելագույն բեռնվածքի և հզորության պակասի կանխատեսումը, որը կանխատեսումների համաձայն կավելանան: Գնահատումը հիմնված է արտադրական առկա հզորությունների, նոր հզորությունների նախատեսվող ավելացման (ինչպես օրինակ՝ փոքր ՀԷԿ–երի և վերականգնումից հետո Հայկական ատոմակայանից էլեկտրաէներգիայի մատակարարման ծավալների ավելացմամբ) և Հրազդանի ՋԷԿ–ի հին կայանների առկա ակտիվները շահագործումից հանելով (նախատեսվում է): Ենթադրվում է, որ առավելագույն բեռնվածությունը կավելանա էներգիայի

ընդհանուր պահանջարկի կանխատեսվող տարեկան միջին աճի չափով (տարեկան 2.2%՝ ելնելով ՀՆԱ–ի աճի և սակագնի տարեկան ավելացման կանխատեսումից): Հզորության պահուստը որոշվում է N-1 հուսալիության չափորոշիչներով և ենթադրվում է, որ հավասար է էներգետիկ համակարգի ամենամեծ միավորին, որը հանդիսանում է Հրազդանի ՋԷԿ–ի հինգերորդ էներգաբլոկը: էներգիայի արտադրության «պատմական» միջին ցուցանիշների հիման վրա է որոշվել հիդրոէլեկտրակայանների համար ընկերության մատակարարման հզորությունը: Ջերմային էլեկտրակայանների և ատոմային կայանի մասով ընկերության հզորությունը գնահատվել է որպես առավելագույն բեռնման պայմաններում պահանջարկը բավարարելու համար էներգիայի արտադրության առկա հզորությունը:

Գծապատկեր 2: Առավելագույն բեռնվածություն և ընկերության կարողության կանխատեսում



Աղբյուր՝ Հիմնադրամի խորհրդատուի գնահատական

Հավելված 2: Նվազագույն տեխնիկական պահանջներ

Հայտատուները պետք է հաշվի առնեն հետևյալ տեխնիկական պահանջները ՖՎ մոդուլների, ինվերտորների և մոնտաժման կոնստրուկցիաների մասով :

ՖՎ մոդուլներ

ՖՎ մոդուլները պետք է ունենան վավեր փորձարկման հաշվետվություններ՝ տրված հեղինակավոր որակյալ փորձարկման հաստատությունների կողմից (ISO 17021 / ISO 17025 և ISO 17065 հավաստագրված) IEC / UL-ի վերջին հրատարակություններով՝ ՖՎ մոդուլների որակավորման ստուգման կամ համարժեք ստանդարտների համար:

Չբացառելով որակավորման նվազագույն չափորոշիչների ապահովումը՝ հայտատուները խրախուսվում են ներկայացնել երրորդ կողմի չափումներով ընդլայնված արագացված մոդուլի թեստի արդյունքները որակյալ փորձարկման հաստատությունների կողմից, ինչպիսիք են՝ TÜV, UL, KIWA, Intertek, NREL կամ DNV-GL: Սրանք ընդգրկում են (սակայն չսահմանափակվելով) հետևյալը. ամբողջականության փորձարկում, հուսալիության ապահովում, երկարաժամկետ հետևողականության (LTS), ՖՎ-ի նախնական երկարակեցության փորձարկում (PVDI) կամ ՖՎ մոդուլի որակավորման փորձարկում:

IEC 61215. Բյուրեղային ֆոտովոլտային (ՖՎ) մոդուլներ՝ Դիզայնի որակավորում և տեսակի հաստատում:

IEC 62108. Խտացված (ՖՎ) մոդուլներ՝ Դիզայնի որակավորում և տեսակի հաստատում:

IEC 61853 - Մաս 1. ՖՎ մոդուլի աշխատանքային փորձարկում և էներգիայի վարկանիշ:

IEC 61730. ՖՎ մոդուլի անվտանգության որակավորում:

IEC 60364-4-41. Պաշտպանություն հոսանքահարումից:

IEC 61701. Աղակալման և կոռոզիայի դիմակայում:

IEC 60904. Ֆոտովոլտային սարքեր:

IEC 62804. Պոտենցիալ Հարկադրված Դեգրադացիա (ՊՀԴ):

IEC 61345. Ուլտրամանուշակագույն փորձարկում Ֆոտովոլտային (ՖՎ) մոդուլների համար:

EN 50380. Տվյալների թերթիկ և գործարանա-պիտակային տեղեկատվություն ֆոտովոլտային մոդուլների համար:

Conformitй Europйenne (EC). Հավաստագրված արտադրանքը համապատասխանում է ԵՄ առողջապահական, անվտանգության և բնապահպանական պահանջներին:

- **UL 1703**. Սույն պահանջները վերաբերում են հարթ ֆոտովոլտային մոդուլներին և վահանակներին, որոնք նախատեսված են ինչպես շինությունների վրա կամ շինություններին ինտեգրված եղանակով տեղադրման համար, այնպես էլ ենթակա են առանձնացված տեղադրման (այսինքն՝ կցված չեն շինությունների)՝ համաձայն National Electrical Code, NFPA 70 և Model Building Codes

Մոդուլների համար պետք է կիրառվի հետևյալ նվազագույն տեխնիկական բնութագրերը .

- Ստանդարտ փորձարկման պայմաններում ՖՎ մոդուլները պետք է ունենան 19% նվազագույն արդյունավետություն:

- Մոդուլների անվանական հզորության ընունելի շեղումը պետք է լինի 0/+3% միջակայքում:

-ՖՎ մոդուլները պետք է երաշխավորված լինեն ելքային հզորության համար, դա պետք է լինի ոչ պակաս, քան 90% շահագործման 10-րդ տարվա վերջում, և 80%՝ շահագործման 25-րդ տարվա վերջում:

Որակի ապահովման ծրագիր. Հայտատուները պետք է ապահովեն համապարփակ ՖՎ մոդուլի որակի ապահովման պլան, որը կարող է ներառել փորձարկում գործարանի վայրում կամ գործարանի ստուգում որակյալ փորձարկող հաստատության կողմից:

Բոլոր ՖՎ մոդուլները պետք է լինեն միևնույն տեսակի և այնպիսի արտադրողից(ներից), որոնք համապատասխանում են հետևյալ պահանջներին.

- 2018թ.-ի հունվար - 2019թ.-ի դեկտեմբերի դրությամբ առնվազն 500 (հինգ հարյուր) ՄՎտ պիկ ՖՎ մոդուլի հզորության մատակարարում
- ՖՎ մոդուլները պետք է տեղադրված լինեն առնվազն չորս տարբեր նախագծերում վերջին երկու տարիների ընթացքում, առնվազն երեք տարբեր երկրներում, յուրաքանչյուր դեպքում ֆինանսավորումը ոչ ռեզերվային է կամ սահմանափակ ռեզերվների հիման վրա,
- ՖՎ մոդուլի արտադրող ընկերությունները պետք է հավաստագրված լինեն հետևյալով՝
    - ISO 9001 - որակի կառավարման համակարգեր և
    - ISO 14001 - շրջակա միջավայրի կառավարման համակարգեր:

Ինվերտորներ

Ինվերտորները պետք է ունենան նվազագույնը 98%–ի չափով եվրո արդյունավետություն և նվազագույնը տաս տարվա ապրանքի երաշխիք և արտադրական թերությունների դիմաց նազագույնը 5 տարվա երաշխիք:

Ինվերտորը պետք է լինի կամ (i) ներքին տիպի և տեղակայված լինի ինվերտորի սենյակի ներսում, կամ (ii) ստուգված արտաքին տիպի, IP65-ի պաշտպանության նվազագույն աստիճանով: Արտաքին տիպի ինվերտորները պետք է տեղադրվեն ինվերտորային կայանի սահմաններում, որը նախատեսված է առնվազն 45°C-արտաքին ջերմաստիճանային պայմանների համար:

Բոլոր ինվերտորները պետք է լինեն միևնույն տեսակի և մեկ արտադրողից, և պետք է տեղադրված լինեն առնվազն երեք տարբեր ծրագրերում վերջին երկու տարվա ընթացքում, յուրաքանչյուր դեպքում ֆինանսավորումը ոչ ռեզերվային կամ սահմանափակ ռեզերվների հիման վրա: Արտադրողը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

- Հինգ տարվա արտադրության պատմություն
- >3000 ՄՎտ գլոբալ տեղակայված հզորություն
- >500 ՄՎտ/ տարի արտադրական հզորություն

Ինվերտորներ արտադրող ընկերությունները պետք է ունենան հետևյալ հավաստագրերը՝

  - ISO 9001 – Որակի կառավարման համակարգեր և
  - ISO 14001 – Բնապահպանական կառավարման համակարգեր.

ՖՎ մոդուլի մոնտաժման կոնստրուկցիաներ

ՖՎ մոդուլի մոնտաժման կոնստրուկցիաները պետք է լինեն կամ ֆիքսված կամ մեկ առանցքի շուրջ պտտվող: Մոնտաժման կոնստրուկցիայի նախագծման և կառուցման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

- Եթե օգտագործվում է արևին հետևող սարքերով/տրեկերներով տեխնոլոգիան, ապա այդ համակարգը պետք է տեղադրված լինի առնվազն երեք տարբեր ծրագրերում, որոնցից յուրաքանչյուրը առնվազն 25 Մվտ վերջին երկու տարիների ընթացքում: Բացի այդ, համակարգը պետք է ունենա առնվազն 5 տարվա երաշխիք:
- Կառուցվածքի հենարանները պետք է արտադրվեն այնպես, որպեսզի դիմակայեն բարձր կարգի կոռոզիային, պատրաստված լինեն անոդավորված ալյումինից կամ ցինկապատ պողպատից, ամրակներից և պտուտակներից,:

- Սյուները (առկայության դեպքում) պետք է լինեն պողպատից կամ բետոնից: Եթե պողպատից են, ապա պատրաստված լինեն օգտագործելով ցինկապատ պողպատից, որպեսզի դիմակայեն կոռոզիայի բարձր մակարդակին:
- Մոնտաժման համակարգը պետք է ունենա տաս տարվա երաշխիք թաքնված թերությունների համար:

Այգ-1 200 ՄՎտ հզորությամբ արևային կայանը էլեկտրահաղորդման ցանցին միանալու նախնական տեխնիկական առաջադրանք

1. Արևային կայանը էլեկտրահաղորդման ցանցին միանալու է կառուցելով 220 կՎ ենթակայան տեղադրելով երկու հատ 250 ՄՎԱ հզորությամբ տրանսֆորմատորներ, որի միագնածի սխեման պատկերված է ստորև:
2. 220 կՎ Աշնակ 1,2 օդային գծերի վրա մոնտժված է օպտիկամանրաթելքային ճոպան (OPGW) 36 ջիլանոց: Մուտք – ելք սխեմայով ցանցին միանալու համար անհրաժեշտ է կառուցել նոր 220 կՎ օդային գծեր (մոտ 300մ) և միաժամանակ մոնտաժել նույն տիպի օպտիկամանրաթելքային ճոպան:
3. Ենթակայանում պետք է նախատեսել կայանային SCADA համակարգ, որը պետք է ունենա հնարավորություն որոշակի տեղեկատվության (ակտիվ հզորություն, ռեակտիվ հզորություն, լարումներ,սարքավորումների միացված կամ անջատված վիճակի վերաբերյալ եվ այլն):
4. Ենթակայանի եվ կայանի հերթապահ անձնակազմը ըստ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կանոնակարգերով օպեֆատիվ առումով պետք է ենթարկվի «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի կենտրոնական կարգավարական կենտրոնի հերթապահ կարգավարին:
5. Օպերատիվ խոսակցությունների նպատակով օպտիկամանրաթելքային կապուղիներով «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի կողմից կտդամադրվի տեխնոլոգիական հեռախոսակապ:
6. Կայանում տեղադրվելիք ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի սարքվածքների ծավալը և գործառույթները պետք է համաձայնեցվի «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի հետ:
7. Ռելեական պաշտպանության դրվածքները պետք է հաշվարկվեն և համաձայնեցվեն «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի հետ:
8. Կայանի սահմանազատման կետում պետք է ապահովվի արտադրողի կողմից հզորության գործակից $\cos\varphi = 1$:
9. Մրցույթի հաղթողը պետք է ցանցային կանոնների պահանջներին համապատասխան դիմի համակարգին միացման տեխնիկական պայմաններ ստանալու համար:

10. Տրված տեխնիկական պայմանների հիման վրա մշակվող կայանի նախագիծը պետք է համաձայնեցվի «ԷԷՀՕ», «ԲԷՑ» և «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ների հետ:

Այգ-1 արևային կայանի ցանցին միացման սխեմա



Նոր կառուցվող ԵԿ

- Գոյություն ունեցող
- Նախատեսվող



Հավելված 3: «Հայաստանի վերականգնվող էներգիայի և էներգախնայողության հիմնադրամի» մասին տեղեկատվություն և կոնտակտային տվյալներ

Հիմադրամը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից 2006թ–ին որպես ոչ պետական կազմակերպություն, որի առաքելությունն է խթանել Հայաստանում էներգախնայո-ղությանը և վերականգնվող էներգիային ուղղված ներդրումները: Հիմնադրամը ներկայումս իրականացնում է Ներդումային ծրագիր Կլիմայի ռազմավարական հիմնադրամի «Վերականգնվող էներգիայի ընդլայնման ծրագրի» (SREP) շրջանակներում: Ներդրումային ծրագրով նախատեսվում է զարգացնել վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաները, որոնք տնտեսապես ընդունելի արժեքի դիմաց երկրում ընդլայնման ամենամեծ պոտենցիալն ունեն: Ներդրումային ծրագրի առաջնահերթություններից են հանդիսանում արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտայիկ (ՖՎ) կայանները:

Ծրագրի անվանում	**Հայաստանի արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագիր**
Հիմնադրամի կոնտակտային տվյալներ	Էլ. փոստի հասցե՝ zaruhi.gharagyozyan@r2e2.am CC: r2e2fund@gmail.com Ի ուշադրություն՝ Զարուհի Ղարագյոզյան Հայաստանի Արևային Ծրագիր
ՆՈՀ–ին մասնակցության վճար	1,000 ԱՄՆ $
ՆՈՀ–ին մասնակցության վճարի անկանխիկ փոխանցման համար մանրամասներ	**ԱՄՆ դոլար** Շահառու: ՀՎԷԷ հիմնադրամ Շահառուի հաշիվ 217001007855101 ԱՄՆ դոլար **ՇԱՀԱՌՈՒ ԲԱՆԿ՝ HSBC բանկ Հայաստան ՓԲԸ, Երևան, ՀՀ**

	SWIFT հասցե: MIDLAM22 **Correspondent Bank** HSBC Bank ԱՄՆ Նյու Յորք ԱՄՆ SWIFT հասցե: MRMDUS33 **Եվրո** Շահառու: ՀՎԷԷ հիմնադրամ Շահառուի հաշիվ 217001007855105 եվրո **ՇԱՀԱՌՈՒ ԲԱՆԿ՝ HSBC բանկ Հայաստան ՓԲԸ, Երևան, ՀՀ** SWIFT հասցե: MIDLAM22 **Correspondent Bank** HSBC ֆրանսիա SWIFT հասցե: CCFRFRPP **ՀՀ դրամ** Շահառու: ՀՎԷԷ հիմնադրամ Շահառուի հաշիվ 217001007855001 ՀՀ դրամ ՇԱՀԱՌՈՒ ԲԱՆԿ՝ HSBC բանկ Հայաստան ՓԲԸ, Երևան, ՀՀ
Նախաորակավորման հայտի լեզու	անգլերեն
Նախաորակավորման հայտի պատճենների քանակը	էլեկտրոնային եղանակով / մեկ բնօրինակ և հինգ պատճեն

Հավելված 4: Հավաստող նամակ

Հասցեատեր՝ «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ»

Թեմա՝ 200 ՄՎտ "Այգ-1" Արևային ՖՎ ծրագիր – Նախաորակավորման Հրավեր

[Ամսաթիվ]

Հարգելի պարոն/տիկին,

Սույնով հղում ենք կատարում _____–ին սույն Ծրագրի առնչությամբ թողարկված Նախաորակավորման հայտին (ՆՈՀ): ՆՈՀ–ում սահմանված, մեծատառերով գրված եզրույթները, որոնք կիրառվել, սակայն չեն սահմանվել այստեղ, կունենան ՆՈՀ–ում վերջիններիս տրված իմաստները:

ՆՈՀ–ի բաժին 5.4.3(ա)–ի համաձայն սույնով [*Հավանական հայտատուի կամ Կոնսորցիումի անդամի անունից*] (Ընկերություն) հավաստում եմ, որ

(a) Ընկերությունը և Համապատասխան բոլոր անձինք սնանկ չեն, կամ չեն գտնվում լուծարման կամ հարկադիր լուծարման վարույթում կամ լուծարված չեն կամ վերջինիս գործերը չեն կառավարվում դատարանի կամ դատական կատարողի կողմից, իսկ նրանց բիզնես գործունեությունը չի կասեցվել կամ վերջիններս վերոնշյալ դատական վարույթներից որևիցե մեկի առարկա չեն հանդիսանում և խելամտորեն ակնկալում են, որ կկարողանան կատարել իրենց բոլոր ֆինանսական պարտավորությունները դրանց առաջանալու դեպքում:

(b) Ո՛չ Ընկերությունը և ո՛չ էլ որևէ Համապատասխան անձ չի մեղադրվել խարդախության, կոռուպցիայի, գաղտնի համաձայնության կամ փողերի լվացման կամ քրեորեն պատժելի արարքի համար, որը ներառում է անազնվություն, ֆիզիկական բռնություն կամ մարդու կյանքին հասցված վնաս, կամ գնումների ընթացակարգերը մեկնարակելուց հետո հինգ տարի ժամկետում իրենց մասնագիտական գործունեության հետ կապված, քրեորեն պատժելի արարք, ոչ էլ հանդիսանում է վստահության և/կամ անընդհանտ մեղադրանքների առարկա և ոչ էլ նման քրեորեն պատժելի գործողությունների համար քննության մեջ է:

(c) Ընկերությունը տեղյակ չէ շահերի որևէ բախման կամ շահերի պոտենցիալ բախման մասին, որն առաջանում է նախորդ կամ առկա պայմանագրերից

կամ հարաբերություններից, որոնք ազդում են կամ կարող են ազդել Ծրագրում վերջինիս կամ (ձևավորման պես) Մատակարարի (կիրառելի լինելու դեպքում) պոտենցիալ ներգրավման վրա:

(d) Ո՛չ Ընկերությունը և ո՛չ էլ Համապատասխան որևէ անձ չկատարված հարկային կամ սոցիալական ապահովության վճարների մասով որևէ պարտավորություն չունեն դատարանի որոշմամբ կամ համանման վարույթների շրջանակներում սույն հրավերին նախորդող երեք տարիների ընթացքում, այնքանով որքանով նման պարտավորությունների մասով հաշվապահական ձևակերպում է կատարվել կիրառվող հաշվապահական հաշվառման ընթացակարգերի համաձայն:

(e) Ո՛չ Ընկերությունը և ո՛չ էլ Համապատասխան անձը նախկինում դուրս չեն թողնվել Հայաստանի Հանրապետությունում մրցույթից կամ պետական գնումների այլ գործընթացներից, չեն զրկվել կամ կասեցվել մասնակցելու պետական գնումների մրցույթներից համապատասխանաբար իրենց երկրներում,

(f) Ո՛չ Ընկերությունը և ո՛չ էլ Համապատասխան անձը չի ունեցել կոնցեսիա/զիջումներ կամ ԷԳՀ-ի դադարեցում, որը կարելի է վերագրել կոնցեսիոների իր պարտավորությունների չկատարման հետ կոնցեսիայի դեպքում կամ էլեկրաէներգիայի վաճառքի հետ ԷԳՀ-ի դեպքում,

(g) Ո՛չ Ընկերությունը և ո՛չ էլ Համապատասխան անձը

- Որպես արգելված անձ ներառված չեն 2010 թ–ի ապրիլի 9–ով թվագրված Արգելման որոշումների համատեղ կիրառման մասին համաձայնագրի կողմ հանդիսանող բազմակողմ զարգացման որևէ բանկի հանրային պատժամիջոցների ցանկում (www.crossdebarment.org), կամ

- Ներառված չեն ՄԱԿ–ի անվտանգության խորհրդի կամ վերջինիս կոմիտեների պատժամիջոցների կիրառման որևէ ցանկում կամ որևէ այլ ճանաչված պատժամիջոցների ցանկում, և

(h) Ո՛չ Ընկերություն և ո՛չ էլ համապատասխան որևէ այլ անձ գործառնություններ ունի (անմիջապես կամ որևէ դուստր ձեռնարկության միջոցով) կամ գործառնություններ է իրականացնում, որոնք չեն համապատասխանում ՄԱԿ–ի անվտանգության խորհրդի կամ վերջինիս կոմիտեների պատժամիջոցներին կամ Հայաստանի Հանրապետության ազգային պատժամիջոցներին

ՆՈՀ–ի Բաժին 5.4.3–ի համաձայն կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը.

(a) Համապարփակ կազմակերպչական կառուցվածքը, որը ցույց է տալիս, նկարագրական տեքստի միջոցով, Ընկերության իրական սեփականատերերին, մինչև անհատների մակարդակում սեփականատիրությունը և նշելով իրավաբանական և ֆիզիկական բոլոր անձանց անունները (կազմակերպչական կառուցվածքի ցանկացած մակարդակում) ովքեր ունեն բենեֆիցիարի իրավունք՝ առնվազն 5%-ի չափով:

(b) Ընկերության կանոնադրական փաստաթղթերի արդի, հավաստագրված օրինակները, և

(c) Լիազորագիր, որը հիմնականում կլինի ՆՈՀ–ին կից ներկայացվող Հավելված 5–ում բերված նմուշի համաձայն և կհամապատասխանի ՆՈՀ–ի Բաժին 5.4.3(d)–ի պահանջներին:

Հարգանքով՝

_____

[*Անուն*]

[*Պաշտոն*]

Լիազորված ստորագրող [*հավանական Հայտատուի կամ կոնսորցիումի անդամի*]

Հավելված 5: Իրավական որակավորում – Լիազորագիր

Հղում է կատարվում Հայաստանի Արևային էներգիայի ծրագրին (Ծրագիր) և Նախաորակավորման հայտին՝ թվագրված առ [ՆԱՀ հրապարակման ամսաթիվ], որը թողարկվել է սույն փաստաթղթի առնչությամբ (ՆՈՀ): ՆՈՀ–ում մեծատառերով գրված եզրույթները, որոնք կիրառվել, սակայն չեն սահմանվել, կունենան ՆՈՀ–ում վերջիններիս տրված իմաստները:

[*Ընկերությունը*], հիմնադրված [*երկրի*] օրենքների համաձայն, որը գրանցված գրասենյակ ունի [*հասցեում*] (Ընկերություն) սույնով անչեղարկելիորեն դելեգացնում, առաջադրում, նշանակում կամ լիազորում է [*անունը*][5] [հասցեն], ով ներկայումս աշխատում է [Կոնսորցիումի *Գլխավոր անդամի մոտ*] և զբաղեցնում է [պաշտոնը], հանդես գալ որպես վերջինիս իրական և իրավասու լիազորված ներկայացուցիչը, որպեսզի վերջինիս անունից կնքի նման բոլոր ակտերը, գործարքները, գործերը (deeds) և այն ամենը, ինչն անհրաժեշտ է կամ պահանջվում է Նախաորակավորման հայտը [*Հավանական հայտատու*]–ի անունից ՆՈՀ–ի համաձայն ներկայացնելու համար և [*Հավանական հայտատուի*] մասնակցությունը, որպես Նախաորակավորված հայտատու ապահովելու նպատակով՝ ներառյալ, սակայն չսահմանափակվելով հետևյալով.

(a) Գործընթացին (այդ թվում նաև Ծրագրի համաձայնագրին) վերաբերող բոլոր դեպքերում, այդ թվում նաև ստորագրման, իրականացման, բոլոր հայտերի, առաջարկների, պայմանագրերի, նախաձեռնությունների և Գործընթացին վերաբերող բոլոր փաստաթղթերը Ընկերությանը [և հավանական Հայտատուին] ներկայացնելով:

(b) Հայտերին նախորդող համաժողովներին և այլ համաժողովներին մասնակցելով և Հիմնադրամին տեղեկատվություն/ պատասխաններ ներկայացնելով և Գործընթացին վերաբերող բոլոր դեպքերում գործ ունենալով Հիմնադրամի հետ:

և սույնով համաձայնում ենք վավերացնել և հաստատել և սույնով վավերացնում և հավաստում ենք բոլոր գործողությունները, դեպքերը և իրականացված պրոցեսները կամ նրանք, որոնք պետք է իրականացվեն մեր Լիազորված անձի կողմից սույն Լիազորագրով պատվիրակված իրավասությունների շրջանակներում և որ բոլոր գործողությունները և պրոցեսները, որոնք իրականացվում են մեր կողմից լիազորված անձի կողմից, մշտապես կհամարվեն որպես մեր կողմից իրականացված:

[5] Կոնսորցիումի դեպքում Կոնսորցիումի բոլոր անդամները պետք է նշանակեն միևնույն անձին, ով պետք է լինի Կոնսորցիումի գլխավոր անդամի աշխատակիցը, պաշտոնատար անձը կամ այլ ներկայացուցիչը:

Յուրաքանչյուր Լիազորված անձի ստորագրության նմուշը կցվում է սույն Լիազորագրի Աղյուսակ 1-ում՝հղման համար:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ՝ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՋՄԵԼ Է ՍՈՒՅՆ ԼԻԱԶՈՐԱԳԻՐԸ 20..թ–ի[6] …–ին:

…… կողմից

Աղյուսակ 1- Ստորագրությունների Նմուշներ

Լիազորված անձ ……

Ստորագրության նմուշ ……

[*կրկնել յուրաքանչյուր լիազորված անձի համար, ինչպես պահանջվում է]*

[6] Զնակերպումների իրականացումը պետք է համապատասխանեցվի հիմնադրման երկրի պահանջներին/Հավանական հայտատուի/ Կոնսորցիումի անդամի հիմնադիր փաստաթղթերի համաձայն (օրինակ՝ երբ խոսքը վերաբերում է նոտարական վավերացմանը/ապոստիլին և այլն): Այնուամենայնիվ, ոչ մի էական փոփոխություն չպետք է կատարվի քանի դեռ նախ չի համաձայնեցվել Հիմնադրամի հետ:

Հավելված 6: Նախաորակավորման ձև

Հասցեատեր՝ «Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ»

Թեմա՝ 200 ՄՎտ "Այգ-1" Արևային ՖՎ ծրագիր – Նախաորակավորման հրավեր

[Ամսաթիվ]

Հարգելի պարոն/տիկին,

1. Հղում եմ կատարում Ծրագրի համար [ՆՈՀ-ի հրապարակման ամսաթիվը], թվագրված Նախաորակավորման հայտին (ՆՈՀ): ՆՈՀ–ում սահմանված, մեծատառերով գրված եզրույթները, որոնք կիրառվում, սակայն չեն սահմանվում այստեղ, կունենան ՆՈՀ–ում վերջիններիս տրված իմաստը:

2. [*Հավանական հայտատուն*] սույնով Նախաորակավորման հայտը ներկայացնում է ՆՈՀ–ի համաձայն և խնդրում է, որպեսզի վերջինս դիտարկվի որպես Նախաորակավորված հայտատու Ծրագրի համար, և հաստատում է, որ

a. Ընդունում և համաձայնում է ՆՈՀ–ի՝ իրավունքից հրաժարվելու և այլ պայմանների հետ:

b. Համաձայնում է ապահովել համապատասխանությունը Հիմնադրամի և պատկան այլ մարմինների կողմից ժամանակ առ ժամանակ սահմանվող բոլոր կանոններին, օրենքներին և կանոնակարգերին, որոնք կառավարում են Գործընթացը և

c. Ընդունում է Հիմնադրամի իրավունքը

(i) Փոփոխելու Ծրագրի «կարողությունները»,

(ii) Լրամշակելու Գործընթացը և փոփոխելու և պարզաբանելու առնչվող ընթացակարգերը և կանոնները,

(iii) Ժամանակ առ ժամանակ փոփոխելու կամ երկարացնելու Գնահատված ժամանակացույցը,

(iv) Դադարեցնելու գործընթացը, և

(v) Հավանական հայտատուից խնդրելու լրացուցիչ այնպիսի տեղեկատվություն, որը պահանջվում է՝ Նախարոակավորման հայտը գնահատելու համար:

յուրաքանչյուր դեպքում, ցանկացած ժամանակ և ցանկացած պատճառով և ցանկացած Հավանական հայտատուի կամ Նախարակավորված հայտատուի համար առանց որևէ պարտավորություն առաջացնելու, և

d. ընդունում է Հայաստանի օրենքների բացառիկ կիրառումը տվյալ Գործընթացի նկատմամբ

3. [*Հավանական հայտատուն*] սույնով Լիազոր ներկայացուցիչ է նշանակում (ինչպես սահմանվում է) Նախարակավորման սույն հայտին կից ներկայացվող Լիազորագրով, ով իրավասու է ստանալ նախարակավորման և մրցույթի հետ կապված ծանուցումներ հետևյալ հասցեով, հեռախոսահամարներով և էլ. փոստի հասցեով:

[Մանրամասներ]

4. [*Հավանական հայտատուն*] սույնով հաստատում է, որ սույն Նախարակավորման հայտին կից ներկայացվող Լիազորագիրը, գործում է, պարտավորեցնող է և ենթակա է ի կատար ածման՝ վերջինիս պայմանների համաձայն:

5. [*Ներառել հետևյալ երկու դրույթներից մեկը՝ կախված այն բանից, թե արդյոք Հավանական հայտատուն կոնսորցիու՞մ է (առաջին դրույթը), թե՞ մեկ ընկերություն (երկրորդ դրույթ)*]:

- [*Հավանական հայտատուն*] հավաստում է, որ այն հանդիսանում է Կոնսորցիում, որը կազմված է Կոնսորցիումի հետևյալ անդամներից՝ [*թվել Կոնսորցիումի անդամներին, պարզաբանել, թե ով է Գլխավոր անդամը և բոլոր անդամները, և սահմանել, թե Ծրագրի Ընկերության բաժնեմասերի որքանի ակնկալվող բաժնետերն է լինելու Կոնսորցիումի անդամներից յուրաքանչյուրը:* [*Հավանական հայտատուն*] հավաստում է, որ Կոնսորցիումի կազմում որևէ փոփոխություն այլևս չի լինի կամ Կոնսորցիումի անդամներից յուրաքանչյուրի կողմից Վաճառողի բաժնեմասերի ակնկալվող բաժնետիրության (կամ դրա հետ կապված վերահսկման կամ այլ շահերի իմաստով) մասով փոփոխություն չի լինի մինչ ստորագրումը կամ Վաճառողին Ծրագրային համաձայնագրերի շրջանակներում պայմանագրի կողմի նովացիան (novation) և միայն թույլատրվելու դեպքում, բացառությամբ այն դեպքի, երբ Հիմնադրամը գրավոր կերպով այլ կերպ կհամաձայնի:

- [*Հավանական հայտատուն*] հավաստում է, որ Նախարակավորման սույն հայտը ներկայացնում է ինքնուրույն և ոչ որպես Կոնսորցիում, և որ վերջինս ակնկալում է Վաճառողի ողջ հասույթը ստանալ (և դրա հետ կապված ողջ վերահսկումը և այլ շահերը) (Վաճառողի ակնկալվող սեփականություն), և որ Վաճառողի կանխատեսվող սեփականատիրության իմաստով որևէ փոփոխություն չի լինի մինչև ստորագրումը կամ Վաճառողին Ծրագրային համաձայնագրերի նովացիան, և միայն թույլատրվելու դեպքում, բացառությամբ այն դեպքի, երբ Հիմնադրամը գրավոր կերպով այլ կերպ կհամաձայնի:

6. [Ներառել միայն այն դեպքում, եթե Հավանական Հայտատուն հանդիսանում է Կոնսորցիում, որը ներառում է առնվազն մեկ Կոնսորցիումի Անդամ, որը չի հանդիսանում Կոնսորցիումի գլխավոր անդամը:

   [Հավանական Հայտատուն] սույնով հավաստում է, որ Ծրագրի շնորհման դեպքում, Կոնսորցիումի գլխավոր անդամը միասնական և առանձին կծածկի կոնսորցիումի ցանկացած անդամի կապիտալի դեֆիցիտը, որը չի հանդիսանում կոնսորցիումի գլխավոր անդամ]:

7. [*Հավանական հայտատուն*] սույնով ներկայացնում և երաշխավորում է, որ այս նամակի օրվա դրությամբ Նախարակավորման սույն հայտում ներկայացվող ողջ տեղեկատվությունը, այդ թվում նաև կից բերված ձևերը և փաստաթղթերը, ճշգրիտ են, ամբողջական և որևէ կերպով թյուրընկալում չեն առաջացնում:

Հարգանքով՝

_____

Կից բերված Լիազորագրով [*Հավանական հայտատուի*] համար Լիազորված անձ

Հավելված 7. Ծրագիրն իրականացնող ընկերության ստեղծման մասին պայմանագրի պայմաններ

Ծրագրի կազմակերպության ստեղծման մասին պայմանագրի (ՍՊ) ընդհանուր դրույթները (ԸԴ)

«Այգ-1» 200 ՄՎտ Արևային ՖՎ Ծրագիր

Կողմեր	[●] և **«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ»** փակ բաժնետիրական ընկերությունը, հիմնադրված 2019 թվականի մայիսի 20-ին ՀՀ կառավարության կողմից, որպես 100% պետական մասնակցությամբ ընկերություն, հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Մելիք Ադամյան փ. 2/2, գրանցման համար՝ 286.120.1075203, ՀՎՀՀ՝ 02697868 (այսուհետ՝ «ԱՆԻՖ»)
Գործունեություն	Ընկերության հիմնական գործունեությունն է՝ Հայաստանի Հանրապետությունում «Այգ -1» 200 ՄՎտ արևային ՖՎ ԾՐԱԳՐԻ նախագծում, կառուցում, շահագործում և սպասարկում (Գործունեություն):
Հիմնադրում	Ընկերությունը հիմնադրվելու է որպես փակ բաժ-նետիրական ընկերություն Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Ընկերության կանոնադրական կապիտալը կազմելու է [1,5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք] ՀՀ դրամ և բաժանված է լինելու [●] հատ հասարակ բաժնետոմսերի, յուրաքանչյուր բաժնետոմսի անվանական արժեքը կազմելու է [●] ՀՀ դրամ:
Բաժնետոմսեր	Ընկերության բաժնետոմսերը Կողմերի միջև կտեղաբաշխվեն հետևյալ հարաբերակցությամբ. i) [●]՝ բաժնետոմսերի 85%-ը ([●] բաժնետոմս). և ii) ԱՆԻՖ՝ բաժնետոմսերի 15%-ը ([●] բաժնետոմս):

ԱՆԻՖ-ի բաժնեմասնակցությունը	ԱՆԻՖ-ը Ծրագրի ընկերությանը կմիանա 15% բաժնեմասնակցությամբ՝ տեղական գործընկերության դիմաց: ԱՆԻՖ-ի 15% բաժնեմասնակցությունը կտրամադրվի անտոկոս փոխառության տեսքով: Փոխառությունը կտրամադրվի Ծրագրի ընկերության ստեղծման պահից և ԱՆԻՖ-ը իրավունք կունենա որպես փոխառություն տրված բաժնեմասնակցության փոխառությունը վերադարձնել դիվիդենտների հաշվին ցանկացած պահի՝ մինչև Ծրագրի ավարտը: ԱՆԻՖ-ին նաև կտրամադրվի անտոկոս փոխառություն Ծրագրի ընկերության կանոնադրական կապիտալի 15%-ի չափով սույն ԸԴ-ի ստորագրման պահից: ԱՆԻՖ-ն իրավունք կունենա վերադարձնել փոխառության գումարը մինչև Ծրագրի ավարտը:
Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարները	Ընկերության հիմնադրման պահին բաժնետոմսերի դիմաց վճարումները պետք է կատարվեն ՀՀ դրամով:
Խորհուրդ	Կողմերն իրավունք կունենենան նշանակել Տնօրենների խորհրդի (Խորհուրդ) անդամներին իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին համամասնորեն: Իր պարտականությունները կատարելու նպատակով Խորհուրդը իր նիստ կգումարի ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս քան տարեկան չորս անգամ, եթե Խորհրդի որոշմամբ այլ բան նախատեսված չէ: Յուրաքանչյուր Խորհրդի անդամ պետք է ունենա մեկ ձայնի իրավունք Խորհրդի ներակացված հարցերի վերաբերյալ: Խորհրդի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած և քվեարկության իրավունք ունեցող Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ Կողմերի միջև կնքված բաժնետիրական համաձայնագրով վերապահված հարցերի, եթե այլ բան նախատեսված չէ կիրառելի

	իրավունքի նորմերով: Խորհրդի անդամներից յուրաքանչյուրն իրավունք ունի նշանակել լիազորված անձ՝ գումարման ժողովներին իրեն ներկայացնելու և իր անունից քվեարկելու նպատակով:
Աշխատակիցներ	Ընկերության նպատարկներն իրագործելու համար Կողմերից յուրաքանչյուրը կներգրավի որակավորված և փորձառու մասնագետներ/ աշխատակիցներ:
Գործարար ծրագիր	ՍՊ-ը պետք է իր մեջ ներառի հաստատված նախնական գործարար ծրագիր և բյուջե: Գործարար ծրագիրը Խորհրդի կողմից պարբերաբար վերանայվելու և հաստատվելու է, ինչպես նաև թարմացվելու է տարին առնվազն մեկ անգամ:
Տարածաշրջան	Ընկերության գործողություններն սկզբանեպես կենտրոնացած կլինեն Հայաստանի Հանրապետության տարածքում:
Մտավոր սեփականության իրավունքներ	Յուրաքանչյուր Կողմն ընդունում է, որ մյուս կողմին մինչ այժմ կարող էին պատկանել մտավոր սեփականության իրավունքներ (այսինքն՝ իրավունքներ, որոնք ծագել էին մինչև ՍՊ կնքումը), և այդ իրավունքները շարունակելու են պատկանել այդպիսի իրավունքներ ունեցող կողմին:
	Կողմերն ընդունում են, որ Ընկերության գոյունեության ընթացքում Ընկերության կողմից հնարավոր է ստեղծվի որոշակի լրացուցիչ մտավոր սեփականություն և այդ իրավունքները պատկանում են Ընկերությանը, և չեն կարող փոխանցվել կամ տրամադրվել, լիցենզիոն պայմանագրով տրամադրվել երրորդ անձանց առանց Ընկերության ուղղակի գրավոր համաձայնության:
Հավաստիացումներ և երաշխիքներ	Սովորական հավաստիացումները և երաշխիքները կընդգրկվեն ՍՊ-ում, ներառյալ. պատշաճ կարգով գրանցված և վավեր գոյություն;

	ՍՊ-ում ներառված պարտականությունների ընդունման և կատարման լիազորություններ և իրավավասություններ; ՍՊ կնքելու համար բոլոր անհրաժեշտ հաստատումները, լիցենզիաները և համաձայնությունները; ՍՊ կնքումը և դրա կատարումըչի չհակասելու որևէ օրենքին, հիմնադիր փաստաթղթերին կամ ցանկացած այլ պայմանագրերին:
Բաժնետոմսերի փոխանցումներ	Բացառությամբ ստորև նշված դեպքերի, կամ կառավարման մարմնի վերակազմավորման դեպքերի, Կողմերից ոչ մեկը իրավունք չի ունենա փոխանցել կամ այլ կերպ տնօրինել Ընկերության բաժնետոմսերը ամբողջ ծավալով կամ դրանց մի մասը՝ առանց մյուս կողմին դրանց փոխանցման նախապես առաջարկի: Ընկերության բոլոր բաժնետոմսերը Կողմերից յուրաքանչյուրը կարող է փոխանցել անձի կամ կազմակերպության բոլոր մյուս Կողմերի նախնական գրավոր համաձայնությամբ:
Ծախսեր	Յուրաքանչյուր Կողմն ինքն է կրում ՍԴ պատրաստման, բանակցությունների և կատարման, ինչպես նաև ՍՊ նախագծման և բանակցությունների հետ կապված իր կողմից կրած ծախսերը:
Գաղտնիություն և Հայտարարություններ	Կողմերից յուրաքանչյուրը պետք է գաղտնի պահի և չբացահայտի որևէ երրոդ անձի, ոչ էլ օգտագործի որևէ նպատակով Կողմից սույն ԸԴ և ՍՊ բանակցելու, կնքման կամ կատարման ընթացքում ստացված տեղեկատվությունը բացի Գործունեության իրականացման նպատակից, Կողմից բացառությամբ այն տեղեկատվությանունը, որը. անհրաժեշտ է բացահայտել գործող օրենսդրության կամ արժեթղթերի շուկան կարգավորող նորմատիվ իրավական ակտերի կամ դատական վճռի կամ

	պահանջի կամ յուրաքանչյուր իրավասու մարմնի պահանջով; ողջամտորեն պահանջվում է բացահայտել խորհրդապահությամբ Կոմի ներգրաված պրոֆեսիոնալ խորհրդականների կողմից՝ ԲՀ և/կամ սույն փաստաթղթով նախատեսված հարցերի կապակցությամբ; և գտնվում է կամ հայտնվում է հանրային տիրույթի շրջանակներում (այլ կերպ, քան ստցող Կողմի թույլ տված խախտմամբ):
Փակուղի (Deadlock)	Փակուղու իրավիճակը համարվում է վրա հասած հետևյալ հանգամանքներից յուրաքանչյուրի դեպքերում. (a) բաժնետերերի համաձայնության չգալը ցանկացած հարցի շուրջ, որը համաձայն ՍՊ, Ընկերության հիմնադիր փաստաթղթերի կամ օրենսդրության պահանջում է իրենց համաձայնութնունը; (b) Խորհրդի անդամների համաձայնության չգալը, այն հարցերի շուրջ, որը վերապահված է խորհրդին կամ հանդիսանում է ձեռնարկատիրրական գործունեության վերաբերյալ այլ էական հարցի; (c) անընդմեջ և թվով երեք Խորհրդի նիստերին քվորումի բացակայություն:
	Փակուղու իրավիճակը լուծվում է համաձայն հետևյալ աստիճանական ընթացակարգի. Եթե Փակուղու իրավիճակը տեղի է ունենում և չի կարող լուծվել բաժնետերերի կողմից 30 օրվա ընթացքում այն երևույթից, որի արդյունք է հանդիսացել փակուղու իրավիճակը Բաժնետերերից յուրաքանչյուրը կարող է հարցը փոխանցել իր գլխավոր գործադիր տնօրենին:

Խաղտում	Հետևյալը կհամարվի խախտում՝ ՍՀ համաձայն, (d) ՍՊ-ով սահմանված բաժնետիրոջ պարտավորություններից ցանկացածի լուրջ կամ անընդմեջ խախտում; (e) Բաժնետիրոջ սնանկությունը կամ լուծարումը, կամ (f) Ցանկացած բաժնետիրոջ փորձ՝ տնօրինելու Ընկերության բաժնետոմսերը ՍՊ-ով սահմանված բաժնետոմսերի փոխանցման սահմանափակումների խախտմամբ: Խախտում թույլ չտված բաժնետերը կարող է բայց պարտավոր չէ (i) գնել խախտում թույլ տված բաժնետիրոջ բաժնետոմսերը արդարացի շուկայական գնով որոշված ներդնումային բանկիրի կողմից հանած տաս տոկոս զեղչ, կամ (ii) պահանջել խախտում թույլ տված բաժնետիրոջից գնելու իր բոլոր բաժնետոմսերը արդարացի շուկայական գնից 10% հավելյալ գնով:
Վեճերի լուծում	Կողմերի միջև սույն պայմանագրից բխող կամ դրա կապակցությամբ ինչպես նաև պայմանագրի խախտման, լուծման կամ վավերությանը վերաբերող վեճերը (Վեճ) ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության Առևտրաարդյունաբերական Պալատի կողմից՝ վերջինիս կանոններին/ընթացակարգերին համաձայն (Կանոններ):
Կարգավորող օրենսդրություն	Սույն ԸԴ և ՍՊ կարգավորվում և մեկնաբանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն: